

ՄԵՐ ԱՆԿԻՆԷՆ

ՄԵՐ ԵՒ ՅԱՐԳԱՆՔ, ՆԱԵՒ՝ ՓՈՒՆՋ ՍԸ ԾԱՂԻԿ ՄԵՐ ԿԱՆԱՆՑ

ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Մարտ 8-ը, միջազգայնօրէն տօնախմբուած կանանց նուիրուած մեծագոյն տօնն է: Պարզ անհատ մարդէն մինչեւ բնտանիքներ, կազմակերպութիւններ, (UNICEF) մեծ ու փոքր երկիրներ, գերօր պետութիւններ եւ Ազգերու Միացեալ Կազմակերպութիւն (ՄԱԿ), աշխարհով մէկ, ամէն տարուան Մարտ 8-ին, կ'ողջունեն եւ կը տօնակատարեն «Միջազգային Կանանց օր»: Այսօրուան դրութեամբ, 51 երկիրներու մէջ տեղի կ'ունենան աւելի քան 784 մեծարանքի միջոցառումներ, որոնք բարձրօրէն կը վերաբերեն պատմական կանանց իրագործումները, բնութագրուած մարդկային եւ մասնաւորապէս աշխատանքային կանանց զանգուածներու կեանքի տնտեսական, բաղաձայն եւ ընկերային կեանքի բարելաւման կապակցութեամբ:

Սկզբնական դարաշրջաններուն, կանայք՝ բնակչութեան կողմէ գրկուած էին ընկերային իրաւունքներու պաշտպանութեան տարրական կարելիութիւններէ, որոնք աւելի շեշտուեցան 20րդ դարու սկիզբներուն, երբ տնտեսութիւնն ու արդիւնաբերութիւնն բարձր մագլցում արձանագրեցին տակաւ գարգացող նարտարարութեան կայսրութեան հաստատումով: Կին աշխատանքը մշտապէս մնաց շահագործման ենթակա: Բաղդատած արանց՝ աւելի նուազ կը վարձատրուէին: Չկային առողջապահական հոգատար պայմաններ: Չունէին ընտրական իրաւունք: Չունէին բողոքելու կարելիութիւններ:

Առ ի բողոք ԱՄՆ-էն ներս տիրող այս անիրաւ աշխատանքի պայմաններու դէմ՝ «Աշխատանքներու Միութիւն» անուան տակ գործող Կանանց շարժման 8 Մարտ 1857-ին, ուստի կանական ուժերու կողմէ՝ բռնի ցրուած ցոյցը, կանանց պիտի առաջնորդէր շարունակելու իրենց աշխատանքը առանց ընկրկումի: 28 Մարտ 1909-ին, ան կազմակերպեց տասնըհինգ հազար հաշուող աշխատանքողներու մասնակցութեամբ հսկայական ցոյց մը, նիւ Եորքի փողոցներուն վրայ: Ան յամառօրէն կը կանգնէր հետեւեալ պահանջներու վրայ.

1. Կրնատել աշխատանքի ժամերը,
2. ստեղծել աշխատանքի կոչուելու եւ գործէ արձակուելու օրէնքներ:
3. ստեղծել աշխատանքի եւ առողջապահական ապահովութիւն,
4. բարձրացնել աշխատավարձերը,
5. իրրեւ երկրի բաղաձայններ՝ ունենալ ընտրելու եւ ընտրուելու իրաւունք,
6. նշել բո-

ՀԻԼԸՐԻ ՔԼԻՆԹԸՆ ԵՒ ԱԼԻ ՊԱՊԱՃԱՆ ՔՆՆԱՐԿԱԾ ԵՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

ՆԱԽԱԳԱՅ ՕՊԱՍԱ ԱՊՐԻԼԻՆ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ ԹՈՒՐԲԻԱ

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ալի Պապաճան եւ Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Հիլըրի Գլինթըն անցեալ շաբաթ օր, Անգարայի մէջ կայացած բանակցութիւններու ընթացքին քննարկել են նաեւ Հայոց Յեղասպանութեան նիւթը: Այս մասին թուրքական NTV հեռատեսիլի ընկերութեան տուած հարցազրոյցի մը ընթացքին յայտնած է Պապաճան:

Թուրքիոյ արտաքին գերատեսչութեան ղեկավարը նաեւ ըսած է. - «Միացեալ Նահանգներու ղեկավարութիւնը յստակ կ'ըմբռնէ, որ այս մեզի համար ցաւոտ հարց է: Ասոր հետ մեկտեղ ես կոչ կ'ընէի Պարաք Օպամային գերծ մնալ 1915 թուականի իրադարձութիւնները որպէս ցեղասպանութիւն ճանչնալ: Միացեալ Նահանգներու նախագահի այդ քայլը կրնայ խոչընդոտել Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւններու բարելաւման ուղղուած ջանքերուն»:

Թուրքիոյ արտաքին գործերու նախարարը, սակայն, յայտնած է, որ դժուար է կուսնել իրադարձութիւններու զարգացումը՝ այդ ուղղութեամբ
«Վտանգը, որ Օպաման կը ճանչնայ այդ իրադարձութիւններ»

«ՆԻ ԵՈՐՔ ԹԱՅՄՁԻ» ԹՂԹԱԿԻՑԸ ԿԸ ԳՐԷ՝ «972 ՀԱՁԱՐ ՀԱՅԵՐՈՒ ԱՆՅԵՏԱՑՈՒՄԻՆ ՇՈՒՐՁ ԹՈՒՐԲԵՐԸ ՄԱՏՆՈՒԱԾ ԵՆ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ԿՈՐՈՒՄՏԻ»

Երկուշաբթի, Մարտ 9-ի թիւին մէջ, «Նիւ Եորք Թայմզ» թերթը հրատարակած է Սապրինա Թափերնիսի Պոլիտիկա ուղարկած մէկ գրութիւնը, որու մէջ ան կ'անդրադառնայ Թուրքիոյ մէջ ի յայտ եկած փաստաթուղթի մը, որու հիման վրայ մարդահամարներու տոմարներուն մէջ, 1915-1916 հայերու թիւը նուազած է 972 հազարով, իսկ այդ մասին ոչ մէկը կ'արտայայտուի, պահելով լռութիւն:

Յօդուածագիրը կը յայտնէ թէ, երկար ժամանակ գաղտնի պահուած այդ փաստաթուղթը կը պատկանի Օսմանեան կայսրութեան ներքին գործոց նախարարի Թալաթ Փաշային եւ որու հիման վրայ 972,000 օսմանցի հայեր երկու տարուայ ընթացքին անհետացած են՝ բնակչութեան պաշտօնական թիւերէն:

«Թուրքիոյ մէջ, որեւէ հարցազրուած եւ կամ հրատարակչին քննարկում, թէ ի՞նչ պատահած է Օսմանեան կայսրութեան հայե-



Հիլըրի Գլինթըն եւ Ալի Պապաճան Անգարայի մէջ իրենց հանդիպման ընթացքին

ը որպէս ցեղասպանութիւն տակաւն առկայ է: Պէտք է մոռանալ, որ նախընտրական շրջանին ան հինգ անգամ խօսած էր այդ մասին», - յայտարարած է Պապաճան:
Խօսելով պաշտօնական Երեւանի եւ Անգարայի միջեւ շփումներու մասին Պապաճան ըսած է. - «Այս

շարունակական գործընթաց է, որ սկիզբ առաւ 2007 թուականի Սեպտեմբերին: Ճիշդ է, մէկ տարի շարունակ հայկական կողմի խնդրանքով այդ կ'ընթանար գաղտնիութեան պայմաններու մէջ»:

ՍԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՅՑԻ ՀԱՍԱԶԱՅՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ՎԻՃԱԿԸ ԵՐԱՄԱՍՏԱՅԻՆ Է

Հայաստանի Հանրապետութեան մարդու իրաւունքներու պաշտպան Արմէն Յարութիւնեան Մարտ 10-ին հրատարակեց տարեկան իր գեկոյցը ու եկաւ յայտարարելու թէ, մարդու իրաւունքներու առումով վիճակը ճգնաժամային է: 275 էջերէ բաղկացած գեկոյցը կու գայ ընդգծելու իրավիճակի լրջութիւնը: Զեկոյցին մէջ ներառուած չեն նոյնիսկ, անցեալ տարուայ նախագահական ընտրութիւններու յաջողած իրադարձութիւնները:

2008 թուականին Օմբուդսմենի (Մարդու իրաւունքներու Պաշտպանի) գրասենեակը ստացած է 5800 բողոք, որոնցմէ միայն 429-ըն ստացած են դրական լուծում:

Արմէն Յարութիւնեան ամփոփ գիծերու մէջ ներկայացնելով գեկոյցը, դիտել տուաւ, որ անցած տարուայ ընթացքին խախտուած է հաւաքներու ազատութիւնը՝ 90-է աւելի հանրահաւաք քաղաքապետարանի կողմէ մերժուած է, իսկ այն պարագային, երբ ընդդիմութիւն կազմակերպած է իր հաւաքները, անոնք անցած են խաղաղ, եւ օմբուդսմենի համար անհասկանալի է, թէ ինչ տեղեկանքներու հիման վրայ է որ, քաղաքային իշխանութիւնները կ'արգիլեն հաւաքները:



Մարդու իրաւունքներու պաշտպան Արմէն Յարութիւնեան

Արմէն Յարութիւնեան անդրադարձաւ լրագրողներու նկատմամբ բռնութիւններու խնդիրին, յստակ օրինակ բերելով «Չորրորդ իշխանութիւն» թերթի լրագրող Գոհար Վեգիրեանի նկատմամբ գործադրուած բռնութեան փաստին, որ նկարահանուած է, եւ, հակառակատու, մեղաւորները պատասխանատուութեան չեն ենթարկուած: «Գայլ» հեռուստաընկերութեան եւ «Բջնիլի» դէպքերն ալ առանձնացուցան, որպէս օրէնքի խտրական կիրառման փաստեր: Անդրադառնալով սեփականութեան իրա-

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ԱՆՇԱՆԴՈՒԹՈՂԱԿԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀՀ կառավարութեան վերջին նիստում վարչապետի պաշտօնը զբաղեցնող Տիրգրան Սարգսեանը հանդուրժողականութեան մասին մի ճառ արտասանեց: Թուով էր, թէ ճառի նպատակը հանդուրժողականութիւն քարոզելն է, ինչը սկզբունքորէն նորմալ է: Բայց երբ փորձում ես, այնուամենայնիւ, մանրամասնօրէն հասկանալ, թէ ինչ է ասածը՝ դրա հեղինակին վիրաւորելու ցանկութիւն է առաջանում:

Նախ՝ սկսում է խօսել քննադատութեան մասին՝ ասելով, որ քննադատութիւնը, ըստ էութեան, լաւ եւ օգտակար բան է, որ դա պէտք է նաեւ կառավարութեանը, որ կողքից իր սխալները տեսնի եւ ուղղի: Յետոյ ասելի է մասնաւորեցնում՝ կտրուկ անցում անում մամուլին՝ ասելով, որ երբ բացում ես որոշ թերթեր, այնտեղ ոչ թէ քննադատութիւն ես տեսնում, այլ նենգ, ստալոյ մեղադրանքներ, ծայրայեղ գնահատականներ, որոնք ոչ մի կապ չունեն իրականութեան հետ, որոնք ունեն մի նպատակ՝ վիրաւորել անձին: Այս այս ամէնի արդիւնքում Սարգսեանը արձանագրում է, որ մենք դեռեւս շատ անելիք ունենք: «Այդ շարութիւնը, անհանդուրժողականութիւնը ձուլում են նոր փամփուշտներ, լինելու են նոր սպանութիւններ, եթէ մենք չկարողանանք մթնոլորտը արմատականօրէն փոխել», - ասում է Տիրգրան Սարգսեանը:

Ընթերցողը կը հարցնի՝ ի՞նչը

ասուածի մէջ աջնայէն չէ: Տեսէ՞ք՝ մի երկրի վարչապետ խօսում է հանդուրժողականութիւն-անհանդուրժողականութիւն գրքերի մասին ու մէկ էլ մասնաւորեցնում, այդ ամէնը ամփոփում մամուլի այն հրապարակումների մէջ, որոնք վիրաւորում են անձին: Հասկացաք, չէ՞, թէ ո՞ր թերթերին նկատի ունի, եւ այդ ո՞ւմ վսեմաշուք անձն են վիրաւորում այդ թերթերը, այդ որոնք են, նրա գնահատմամբ, ստալոյ ու նենգ մեղադրանքները: Ընդհանրապէս, հանդուրժողականութեան սարգսեանական կոչին յարգանքով կը վերաբերուէի, մի լաւ կը խորհէի նրա ասածի մասին, կը փորձէի ընդառաջ ինչ-որ բան անել, ասել՝ եթէ չպարզուէր, որ ինքը պրոբլեմը տեսնում է ընդամէնը մամուլի էջերում իր անձին հասցուած՝ իր տեսակէտից վիրաւորանքի մէջ: Նրա ասածին յարգանքով կը վերաբերուէի, եթէ նա որպէս անհանդուրժողականութեան դրսեւորում դիտեր նաեւ քաղաքացիական իրաւունքի առկայութիւնը երկրում, որպէս անհանդուրժողական օրինակ բերէր լրագրողների նկատմամբ յարձակումները, եթէ ընդդիմադիր մամուլի կողքին կէս բառ ասէր հեռուստատեսային խոսի՝ ընդդիմադիր լրագրողների վրայ գործուած յարձակումների մասին:

Բայց չէ, այս ամէնի մասին լուում է, լուում է մարդկանց հրապարակային ծեծի ենթարկելու, ծեծե-

լով սպանելու յայտնի դէպքերի մասին: Նրա համար անհանդուրժողականութիւնը այն չէ, որ ընտրութիւնների օրը մարդկանց գողանում են ու կանդալում: Նրա համար անհանդուրժողականութիւն չէ թուցիկ տարածող երիտասարդներին ոստիկանութիւններ քարշ տալը կամ լրիւ օրինական հիմունքներով երթանող մարդկանց քաշքշելը, հացադուլ յայտարարած կանանց ոստիկանական բռնի ուժով ցրելը: Նրա համար անհանդուրժողականութիւն չէ, երբ թաղային ոստիկանները մարդկանց սպառնում են հանրահաւաքի չմասնակցել: Նրա համար անհանդուրժողականութիւնը այն է, երբ թերթերը իր անձը վիրաւորում են: Այ, որ չվիրաւորեն իր անձը, ուրեմն հանդուրժողականութիւն է հաստատուած երկրում: Դէ արի ու մի ասա՝ վարչապետի ֆուտլար, իսկականից: Բա հըլը սրա թոյլ տուած արտայայտութեանը. «Նոր սպանութիւններ են լինելու, եթէ մենք չկարողանանք մթնոլորտը արմատականօրէն փոխել»:

Հիմա, եկէ՞ք հասկանանք, թէ ըստ նրա տեքստի՝ ովքեր են մթնոլորտը խաթարում: Մի քանի թերթերը, որոնք անհանդուրժողականութիւն են սերմանում, եւ ուրեմն՝ ինքները ենթադրէք, թէ ինչ է նշանակում մթնոլորտը փոխել: Եւ ինքնին հասկանալի է, թէ ովքեր են լինելու վարչապետի ֆուտլարի կանխատեսած սպանութիւնների թի-

րախը: Եւ ամենեւին էլ զարմանալի չէ, որ նա, անհանդուրժողականութեան ու սպանութիւնների մասին խօսելիս, ծպտուն անգամ չի հանում այն մասին, որ Մարտի 1-ին գնդակահարուած ՀՀ տասը քաղաքացիների սպանութիւնները մինչեւ օրս բացայայտուած չեն: Ու սրա համար նա իրեն մեղաւոր չի համարում: Նա իրեն մեղաւոր է համարում միայն արմատական ընդդիմութիւն եղած ժամանակների համար ու ներողութիւն է խնդրում ընդդիմախօսներից:

Ներողութիւն խնդրել պէտք չէ, երիտասարդ. ասա, որ որպէս վարչապետ՝ համարում ես, որ բոլոր քաղաքացիները պէտք է ազատ արձակուեն, գլխաւոր դատախազից պարզաբանում պահանջիր, թէ ինչու Մարտի 1-ի սպանութիւնները բացայայտուած չեն, ոստիկանութեան պետից պարզաբանում պահանջիր, թէ ինչու են այս տարուայ Մարտի 1-ին ճանապարհները փակուած եղել, եւ ինչու մինչեւ հիմա գնահատական տրուած չէ մի հոգուն իրենց քացու տակ առած մօտ մէկ տասնեակ ոստիկանների գործողութիւններին:

Ինչո՞ւ մինչեւ հիմա պարզուած չէ ուղիղ նշանաուութեամբ քաղաքացիների վրայ կրակող ոստիկանների ինքնութիւնը: Ուզո՞ւմ էք՝ շարքը շարունակեմ: Ասում ես՝ սպանութիւններ են լինելու: Վախեցնում ես, հա՞: Գլուխդ պատին ես տուել:

ՆԻԿՈՂ ՓԱՇԻՆԵԱՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

«ԱՌԱՋ ՐԱՅԱՍՏԱՆ» ԴՐԱՄԱ ՄԻ ԲԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄ

Ինչ որ բան Հայաստանում իսկապէս կատարուած է, եւ դա ակնյայտ է դառնում ասելի, ինչքան որ իշխանութեան առանձին ներկայացուցիչներ փորձում են այդ ակնյայտը դարձնել անտեսանելի, ինչքան էլ փորձում են ցոյց տալ, որ ամէն ինչ շատ հանգիստ է եւ ոչ մի արտառոց բան չի կատարում: Բայց միթէ արտառոց չէ, որ երբ երկիրը խնդիր ունի՝ կապուած քաղաքացիական իրաւունքի առկայութեան հետ, այդ մասին մատնանշում են մեր արտաքին կարեւորագոյն գործընկերներ Միացեալ Նահանգներն ու Եւրոպան, բայց Հայաստանի գլխաւոր դատախազը նկարչական ցուցահանդէս է բացում Մարտի 8-ի կապակցութեամբ: Կամ միթէ արտառոց չէ, որ երբ Հայաստանի քաղաքացիները մինչեւ այժմ շարունակում են որոնել Մարտի 3-ի «մեծ ցնցման» հետ կապուած կարեւոր պատասխանները, որից մեծապէս կախուած է պետութեան հանդէպ քաղաքացու հաւատն ու վստահութիւնը, Հայաստանի նախագահն այդ ընթացքում ոչ միայն ոչինչ չի ասում քաղաքացիներին, ոչ միայն հրապարակային ոչինչ չի անում այդ «մեծ ցնցման» կապակցութեամբ, այլ վեր է կենում ու հրապարակաւ գնում է բալետի փորձ դիտելու: Որն էր դրա նպատակը, դժուար է ասել, բայց կարծես թէ նկատելի է այդ քայլի հակաձգնաժամային երանգը: Փաստացի Սերժ Սարգսեանն այդպիսով փորձում է դրսեւորել, որ «այնքան էլ սարսափելի չէ սատանան, ինչքան որ նրանից վախենում են»: Այսինքն, նա գնում է բալետի փորձ դիտելու, ցուցադրաբար փորձելով ներկայացնել, որ այլ ինչոր պարզապէս չկայ, ճգնաժամը պարզապէս ոչինչ է Հայաստանի իշխանութեան կամքի եւ

իմաստնութեան առաջ: Պետական կառավարման այդ ընթացքը եթէ ոչ բալետի, ապա թատրոնի հետ լիովին համեմատելի է: Ընդ որում, դերասանական խաղի առումով դրա մասնակիցները ոչ միշտ են համոզիչ: Նրանց ասելի ու ասելի դժուար է լինում կոծկել բարդ իրականութիւնը եւ համոզել հասարակութեանը, որ ամէն ինչ կարգին է, որ ամէն ինչ վերահսկուած է: Իհարկէ, վերահսկուած է գրեթէ իւրաքանչիւր քաղաքացի, վերահսկուած է այլախոհութեան ցանկացած օջախ, վերահսկուած է երկրում ծախսուող ամէն մի կոպէկը, բայց տնտեսութեան անկումը կարծես թէ դուրս է եկել վերահսկողութիւնից եւ յայտնուել է ազատ ռեժիմում: Խնդիրը միայն այն չէ, որ տեղի ունեցած դրամի կտրուկ արժեզրկումն է «մեծ ցնցումը», ինչդիրն այն է, որ այդ ընթացքում իշխանութեան պահուածքը, որը շարունակում է մինչեւ հիմա, հասարակութեանը գրեթէ ոչնչով չհամոզեց, որ այդօրինակ ցնցումներ այլեւս չեն լինի: Հետեւաբար, «մեծ ցնցում» արտայայտութիւնը յարաբերական է եւ շատ հնարաւոր է, որ ապագայում տեղի ունենան իրողութիւններ, որոնք քաղաքացիների զգալի մասին ուղղակի կը ստիպեն երանութեամբ յիշել Մարտի 3-ի կէսօրը: Յամենայն դէպս, այդ ենթադրութեան հիմքը իշխանութեան վարքն է, որով փորձում են այնպիսի տպաւորութիւն ստեղծել, որ ոչ մի արտառոց բան չի եղել, իսկ եղածն էլ կառավարութիւնը ծրագրել էր ըրոպէի ճշգրտութեամբ: Ով իմանայ, թէ նման էլ ինչ անակնթիւներ է ծրագրել կառավարութիւնը քաղաքացիների համար ապագայում: Ով իմանայ, որ մի օր էլ նոյն անակնկալ ծրագրի համա-

ձայն դուրսը 350-360-ից չի դառնայ 450-460: Ով իմանայ, չէ որ ոչ ոք ոչ մեկին ոչինչ չի ասում, առաւել եւս նախապէս: Ասում են, որ ֆինանսները մի շատ նուրբ ոլորտ են, որ չեն սիրում շատ խօսքեր եւ աղմուկ: Իսկ գիտէ արդեօք իշխանութիւնը, թէ ինչ են սիրում քաղաքացիները: Գիտէ արդեօք իշխանութիւնը՝ ֆինանսներն են ասելի նուրբ, թէ քաղաքացիները: Գիտէ արդեօք իշխանութիւնը, որ ֆինանսների նախասիրութիւնը բաւարարելուց բացի, շատ կարեւոր է նաեւ բաւարարել քաղաքացիների նախասիրութիւնը: Իսկ քաղաքացիները սիրում են թափանցիկութիւն, սիրում են իշխանութեան քայլերի յստակութիւն, բացատրութիւն, սիրում են, որ իշխանութիւնը կարողանայ յստակ պատասխան տալ ինքն իր արածի համար, եւ անի այնպիսի բաներ, որոնք ոչ թէ վնասում, այլ օգուտ են բերում քաղաքացիներին: Իսկ այդպիսի բաներ անելու համար պէտք է, որ երկրում ամէն ոք զբաղուի իր գործով: Օրինակ, գլխաւոր դատախազը պէտք է ոչ թէ նկարի, այլ քրէածին վիճակով մտահոգուի, որ փոխտնտեսականայեւ տնտեսական իր տան մուտքի մօտ, կամ որ Մարտի 1-ին սպանուած քաղաքացիների համար պատասխան տան մարդասպանները, ոչ թէ իշխանութեան ընդդիմախօսները: Եւ կամ, նախագահը պէտք է ոչ թէ բալետի փորձ նայի, այլ պէտք է նայի, որ կառավարման համակարգը հասարակութեան առաջ թատրոն չխաղայ, երբ մի քանի ժամում վարագոյրը բացուած է եւ ի ցոյց դնում իրավիճակի պերճանքն ու թշուառութիւնը:

ՅԱԿՈՒ ԲԱԴԱԼԵԱՆ
«ԼՐԱԳԻՐ»



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԹԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ՍԱՐԻԷԼ ՍՈՒՆՅԵԱՆ
ՊԱՅԿ ԹՈՒԹՅԵԱՆ
ՏՕԹԹ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԵԱՆ
ՎԱԶԳԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ
Ղեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797- 6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ՐԱՅԱՍՏԱՆ

«ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԲԱՑԱՍԱԿԱՆ Է ԳՆԱՅԱՏՈՒՄ ԳԱԳԻԿ ԲԵԳԼԱՐԵԱՆԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

Ընդդիմադիր «Ժառանգութիւն» կուսակցութիւնը «քաղաքական առումով» բացասական է գնահատում Կենտրոնի թաղապետ Գագիկ Բեգլարեանի նշանակումը Երեւանի քաղաքապետի պաշտօնում:

«Գագիկ Բեգլարեանի նշանակումով ուզում են վարչական բոլոր հնարաւորութիւններն ուժեղացնել, որպէսզի (Երեւանի աւագանու եւ քաղաքապետի) ընտրութիւնների ժամանակ առաւելագոյն կառավարելի լինեն բոլոր պաշտօնեաները: Սա մի լծակ է, որն օգտագործելու են ընտրութիւնների ընթացքը կեղծելու, շտկելու համար», - լրագրողների հետ հանդիպմանը ասաց «Ժառանգութիւն» կուսակցութեան վարչութեան նախագահ Անահիտ Բախչեանը:

«Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Լարիսա Ալավերդեանը յաւելեց. - «Ես կարծում եմ, որ առաջին հերթին Գագիկ Բեգլարեանի համար դա լաւ է: Կարծես թէ կասկած կա, որ եթէ նա գնար բոլորի հետ հաւասար ընտրութիւնների, իր յղթելու հաւանականութիւններով սկսել է աշխատել մեր ընտանիքի դէմ: Յարձակումների թիրախ դարձան ընտանիքին պատկանող ձեռնարկութիւնները եւ նրանց հետ համագործակցող տարբեր ընկերութիւններն ու անձինք: «ԲՆԻ» ընկերութիւնում եւ «ՍԻԼ Կոնցեռն»-ի հետ համագործակցող «Պիցցա դի Ռոմա» ընկերութիւնում հարկային ծառայութիւնը սկսեցին ստուգումների իրականացման մի այնպիսի յարձակողական օպերացիա, որի կազմակերպութեան եւ կատարողական բարձր վարպետութեամբ թերեւս հաւասարազօր է թշնամու դէմ ռազմական օպերացիային», - ասուած է տարածած յայտարարութեան մէջ:

նութիւնը աւելի քիչ կը լինէր»:

«Ժառանգութեան» պատգամաւորները յայտնեցին, որ կուսակցութիւնը առաջիմ չի որոշել, թէ Երեւանի աւագանու եւ քաղաքապետի առաջիկայ ընտրութիւններին ո՞վ կը գլխաւորի կուսակցութեան համամասնական ցուցակը՝ նշելով, որ իրենք հակուած են ընդդիմադիր ողջ հատուածի՝ միասնական թեկնածուով հանդէս գալուն:

Մարտի 4-ին Սերժ Սարգսեանի հրամանով Գագիկ Բեգլարեանը նշանակուեց Երեւանի քաղաքապետ: Աւելի վաղ՝ Փետրուարի 28-ին ՀՀԿ-ի խորհրդի նիստը հաստատել է Երեւանի աւագանու ընտրութիւններին կուսակցութեան համամասնական ցուցակը, որը գլխաւորում է Բեգլարեանը:

Մայիսի 31-ին կայանալիք աւագանու ընտրութիւններում ընտրողների քուէների կէսից աւելին հաւաքած քաղաքական ուժի ցուցակի առաջին համարը կը դառնայ Երեւանի քաղաքապետ: Իսկ եթէ որեւէ կուսակցութիւն կամ դաշինք չառանայ ձայների կէսից աւելին, քաղաքապետին կ'ընտրի աւագանին:

ՍՈՒՔԻԱՍԵԱՆՆԵՐԸ ԿԸ ԴԻՄԵՆ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Հետախուզման մէջ գտնուող Ազգային ժողովի պատգամաւոր Խաչատուր Սուքիասեանի հայրը՝ Ալբերտ Սուքիասեանն այսօր հանդէս է եկել յայտարարութեամբ, որտեղ մանրամասնօրէն ներկայացուած է 2007-ի Սեպտեմբերի 21-ից յետոյ նրանց ընտանիքին պատկանող «ՍԻԼ Կոնցեռն» տնտեսական միաւորման դէմ իշխանութիւնների վարած քաղաքականութիւնը: «2007 թուականի Սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի Հանրապետութեան անկախութեան տօնին յաջորդող ամէն օր եւ ամէն ժամ մեզ՝ Սուքիասեանների ընտանիքի անդամների համար մեր Հայրենիքում անազատ եւ անաբեկուած պարելու մղձականջի են վերածուել: Պատճառը կայանում էր նրանում, որ «ՍԻԼ Կոնցեռն»-ի հիմնադիր, Աժ պատգամաւոր Խաչատուր Սուքիասեանը հրապարակաւ յայտարարեց, որ նախագահական ընտրութիւններում պաշտպանելու է ոչ թէ գործող իշխանութիւնների թեկնածուին, այլ Լեւոն Տէր-Պետրոսեանի թեկնածութիւնը:

Այդ օրուանից սկսած պետական մեքենան իր ամբողջ կարողութիւններով եւ ապօրինի գործողութիւններով սկսել է աշխատել, որ իրենք պատրաստուած են շարունակել պաշտպանել իրենց «օրինական իրաւունքները» եւ կազմակերպել բողոքի ակցիաներ, դիմել դատական ատենաներին, ընդհուպ Եւրոպական դատարան, ստեղծել հասարակական կազմակերպութիւն (ի պաշտպանութիւն Սուքիասեան ընտանիքի) համապատասխան փաստաթղթեր յանձնել դեպքաւստների:

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԲԱՏՆԵՐՈՒՄ ԶԵՐԹԵՐ ԵՆ

Երեւանի գրաւատներում հերթեր են: Ու չնայած դուրսի փոխարժէքի աճին գուզահեռ գրաւի ամսական տոկոսադրոյքներն են բարձրացել, մարդիկ, այնուամենայնիւ, շարունակում են օգտուել գրաւատների ծառայութիւններից:

«Ստիպուած եմ գրաւ դնել ոսկէ մատանիս եւ շղթաս: Տղաս «Հրազդան» տօնավաճառում է աշխատում, սակայն երկու ամիս է՝ գործը կանգնել է»,- «Ա1»-ին հետ գրոյցում ասաց 47-ամեայ Նինա Պետրոսեանը: Ի դէպ, հերթում կանգնածների մեծ մասը երիտասարդներ էին: Նրանք խուսափում էին ասել, թէ ինչ ինչ ինչեր են ունեն եւ ինչ նպատակով են գրաւ դնում արժէքաւոր իրերը:

Գրաւատներից մէկի աշխատակիցը նշեց, որ արդէն մէկ շաբաթ է մարդկանց հոգը չի դադարում: «Նման բան էջր եղել: Աշխատում ենք 24 ժամ եւ նոյնիսկ կէսգիշերին յաճախորդներ ենք ունենում»,- ասաց մեր գրողակիցը: Մէկ այլ գրաւատանը գումարը վերջացել էր, եւ յաճախորդները ստիպուած էին սպասել:

«Պատրաստուած եմ գրաւ դնել «Նիվա» մակնիշի ավտոմեքենաս: Աշխատում եմ եւրոպայական համայնքի արտադրամասում, սակայն պատուէրներ չունենք: Գումար եմ վերցնում, որպէսզի տղաներիս ուղարկեմ Եւրոպա: Այս երկու ամիսն անիմաստ է»,- ասում էր 57-ամեայ Կամոն:

ՀՐԱՆԴ ԲԱԳՐԱՏԵԱՆ. «ԴՐԱՍԸ ԻՆՔՈՒՐ ԿՐԹԵԶՐԿՈՒԵՑ»

«Կենտրոնական բանկը միշտ նախկինում ասել է, թէ «լողացող կուրսի» քաղաքականութիւն է տանում: Սահմանադրութեամբ էլ, բոլոր տեսակի օրէնքներով էլ, այլ որոշում չի կայացուել երբեք, որ քաղաքականութիւնը «լողացող» չէ», - ընդգծեց Հայաստանի նախկին վարչապետ, Հայ ազգային կոնգրեսի ներկայացուցիչ Հրանդ Բագրատեանը՝ «Ազատութիւն» ռադիոկայանին տուած հարցազրոյցում մեկնաբանելով Երեքշաբթի օրը Կենտրոնական բանկի արած յայտարարութիւնը «լողացող փոխարժէքի» անցնելու մասին:

«Երբ դրամը արժեւորում էր, Կենտրոնական բանկը ասում էր՝ «մենք ի՞նչ կապ ունենք սրահետ», իբր՝ աշխատանքի արտադրողականութիւնն էր բարձրանում՝ դա առաջին բացատրութիւնն էր, իսկ երկրորդ բացատրութիւնը՝ թէ «դրսից տրանսֆերտներ կան, մենք ոչինչ չենք կարող անել, լողացող կուրս է, դրամը արժեւորում է», - նշեց Բագրատեանը:

Նախկին վարչապետի կարծիքով, դրամի արժեզրկումից առաջ Կենտրոնական բանկի կողմից հարկը միլիոնաւոր դոլարի ներարկումները շուկայ «իզուր» էին, եւ տեղի է ունեցել սպեկուլացիա. - «Մօտ 700 միլիոն է վաճառուել այդպէս, եւ այդ դրամական հոսքերը հիմնականում Ռուսաստան են գնացել»:

Մեկնաբանելով վարչապետ Տիգրան Սարգսեանի՝ հեռուստատեսութեամբ տուած պարզաբանումները, որ դրամի սահուն արժեզրկման չգնացին սպեկուլանտների դէմ պաշարելու միտումով, Բագրատեանը յայտարարեց. - «Վարչապետ Տիգրան Սարգսեանը պարզապէս ստում է: Կառավարութեան ներսում բոլորովին ուրիշ բան է տեղի ունենում»:

Նախկին վարչապետը չի նշեցրեց, որ դեռ 2008 թուականի Դեկտեմբերի վերջին Հայ ազգային կոնգրեսը եւ մասնաւորապէս ինքը



Մախկին վարչապետ, Հայ ազգային կոնգրեսի ներկայացուցիչ Հրանդ Բագրատեան

կանխատեսել էին, որ Փետրուար-Ապրիլին տեղի կ'ունենայ դրամի առաջին փլուզումը. - «Իրենք դրամի կուրսը պահել են, որովհետեւ իրենց պէտք էր էփան դոլար, ամենաէփան դոլարը Հայաստանում էր: Բաց են թողել, այսինքն՝ համեմատաբար բաց են թողել այն ժամանակ, երբ այլեւս չէին կարող պահել: Հիմա էլ դրամը, ի դէպ, լողացող կուրս չի. իրենք ինտերվենցիաներ են անում՝ աւելի քիչ, քան առաջ: Մենք նաեւ ասել ենք կոնգրեսում, որ մէկ տարուայ ընթացքում կուրսը կը կրկնապատկուի»:

Հրանդ Բագրատեանի պնդմամբ՝ ոչ թէ կառավարութիւնն է գնացել դրամի արժեզրկման, այլ «դրամը ինքը արժեզրկուեց», ընդ որում՝ նա դրանում չի տեսնում նաեւ միջազգային ֆինանսական կազմակերպութիւնների պարտադրանքը. - «Եթէ կարողանային դիմանալ, կը դիմանային: Էլ փող չտուեցին, էլ չկար փող, որ տային: Որովհետեւ Հայաստանը պէտք է պահի երեք ամսուայ ներմուծման պահուստ: Միջազգային հիմնադրամներն ասացին՝ «չենք թոյլ տա դրանից աւել ծախսէք»: Այսինքն, 700 միլիոն դոլարից աւել թոյլ չէին տալու ծախսել»:

ԱՐԱՐԱՏԻ ՊԱՅԱԾՈՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻՆ ՊԱՐՏՔ Է 80 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՍ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:

Գիւղացիական տնտեսութիւնների աւելի քան 100 ներկայացուցիչներ հաւաքուել էին կառավարութեան շէնքի մօտ՝ պահանջելով ստիպել Արարատի պահածոների գործարանին վճարել անցած տարի իրենց կողմից մթերուած մօտ 80 միլիոն դրամի գիւղմթերքների դիմաց կուտակուած պարտքը:

«Մենք այնքան ենք կոփուել, որ ոչ մի կառավարութեան աջակցութիւն չենք ուզում, ընդամէնը մեր քրտնած աշխատանքի գումարն ենք ուզում», - «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց բողոքողներից մէկը:

Անցած տարի Արարատի մար-

զի տարբեր գիւղերից Արարատի պահածոների գործարանին մօտ 80 միլիոն դրամի գիւղմթերք է յանձնել: Կնքուել է են պայմանագրեր, որ գործարանը պարտաւորուած է մինչեւ տարեվերջ վճարել մատակարարուած մթերքի դիմաց, սակայն գիւղացիական տնտեսութիւններին հասանելիք գումարները դեռեւս չեն վճարուել:

Կառավարութեան Քաղաքացիների ընդունելութեան եւ դիմում-բողոքների քննարկման վարչութեան պետ Ալեքսանդր Դազարեանը հաւաքուածներին տեղեկացրեց, որ գործարանը խոստացել է մարտի 12-ից սկսել վճարումները:

ԼԻԲԱՆԱՆԱՅԱՅԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ
Յառաջիկայ Յունիս 7-ին տեղի պիտի ունենան Լիբանանի խորհրդարանական ընտրութիւնները: Այն լիբանանահայերը, որոնք կ'ուզեն մասնակցիլ այդ ընտրութիւններում, կրնան հեռաձայնել՝ 310-466-7779 թիւին եւ ստանալ յաւելեալ մանրամասնութիւններ:

ԼՈՒՐԵՐ

«ԷՅՉ ԷՍ ԲԻ ՍԻ»-Ի ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆՆԵՐԸ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՄԱՐ 2009-ԻՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ ԵՆ ԶՐՕ ՏՈԿՈՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԾ

«Էյչ էս Բի Սի Բանկ»-ի տնտեսագետ վերլուծաբանները Հայաստանի համար այս տարի կանխատեսել են գրո տոկոս տնտեսական աճ: Նման ցուցանիշը, ըստ «Էյչ էս Բի Սի Բանկ - Հայաստան»-ի գլխավոր գործադիր տնօրէն Թիմ Սլեյթերի, դրական կարող է լինել Հայաստանի համար, քանի որ բանկի գործընկեր երկրներից, օրինակ, Ռուսաստանի համար կանխատեսուել է համախառն ներքին արդիւնքի նուազում 3 տոկոսով, Ղազախստանի համար՝ 2,5, իսկ Ուկրաինայի համար՝ 9 տոկոսով:

Այս առումով միակ շահող երկիրը, ըստ «Էյչ էս Բի Սի»-ի վերլուծութիւնների, Վրաստանն է, որտեղ բազմաթիւ ներդրումներ են նախատեսուել Եւրամիութեան դոնոր երկրների կողմից:

Եթէ 2008 թուականի աւարտին Հայաստանում արձանագրուել է 5-5,2 տոկոս ինֆլյացիա, ապա այս տարի, «Էյչ էս Բի Սի Բանկ - Հայաստան»-ի կանխատեսումներով, ինֆլյացիան կը հասնի 10-12 տոկոսի:

ԱԶԱՏԵԼ ԵՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԾ ԶԱՅԵՐԻՆ

Մարտի 6-ի գիշերը կալանքից ազատ են արձակուել Ախալցխայի երիտասարդական կենտրոնի տնօրէն Գրիգոր Մինասեանն ու «Շարլ Ազնաւուր» բարեգործական միութեան նախագահ Սերգէյ Յակոբջանեանը: Յայտնի էր նաեւ այն փաստը, որ վերջիններիս ձերբակալումից՝ Յունուարի 22-ից յետոյ, վրացական իրաւապահ մարմինները նրանց նկատմամբ սահմանել էին նախնական երկամսեայ կալանք: Ելնելով վերջին հանգամանքից՝ սպասուում էր, որ վրաց իրաւապահ մարմինները իրենց նախաքննութեան արդիւնքների եւ այս հիմքի վրայ նախնական եզրահանգումների մասին պէտք է յայտարարէին Մարտի 25-ին: Ինչպէս յայտնուում է «Միաք» վերլուծական կենտրոնը, Գ. Մինասեանն ու Ս. Յակոբջանեանը արդէն իրենց սեփական բնակարաններում են, երբ անգամ չի լրացել վերջիններիս նախնական կալանքի երկամսեայ ժամանակահատուածը:

Իրենց ճակատագրի ներկայ ու հետագայ ընթացքի մասին մինչ այժմ մեկնաբանութիւններ չեն տուել այս ամէնի մասին տեղեկութիւնների ամենահաւաստի աղբիւրները՝ Գ. Մինասեանն ու Ս. Յակոբջանեանը: Յիշեցնենք, որ եւս ձերբակալուած հայ՝ Վահագն Չախալեանն առայժմ անազատութեան մէջ է գտնուում:

ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԵԱՆ ԲՆԱԳԱԲԱՌՈՒՄ ԶԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐԿԱՆԻՇՆ ՍԻՋԻՆԻՑ ՑԱԾՐ Է

Զբօսաշրջութեան բնագաւառում Հայաստանը միջինից ցածր վարկանիշ ունի, ընդ որում, վերջին տարում վարկանիշն աւելի է ընկել: Համաշխարհային տնտեսական ֆորումի հրապարակած գեկոյցի համաձայն, զբօսաշրջութեան բնագաւառում մրցունակութեան ցուցիչով Հայաստանը 133 երկրների ցմանկում զբաղեցնում է 91-րդ հորիզոնականը՝ նախորդ տարուայ 89-րդի փոխարէն:

ԱՊՀ միւս երկրները՝ բացի Տաջիկստանից, Ղըրղստանից, Մոլդովայից ու Ղազախստանից, Հայաստանից աւելի բարձր դիրքերում են: Սահմանակից հարեւանները՝ Ադրբեջանն ու Վրաստանը մեզ գերազանցում են 15 եւ 18 միաւորով: Ադրբեջանը 76-րդ հորիզոնականում է, Վրաստանը՝ 73-րդ: Ռուսաստանն այս տարի զբաղեցրել է 59-րդ տեղը:

Փորձագէտները ամենացածրը գնահատել են Հայաստանի էկոլոգիական վիճակը: Գոհացնող չեն օդային եւ ցամաքային տրանսպորտի ծառայութիւնների որակը, զբօսաշրջիկների համար ինտերնետի մատչելիութիւնը: Ըստ գեկոյցի, զբօսաշրջիկները չեն վստահուում մեր երկրի իրաւապահ համակարգի, ոստիկանութեանը՝ չնայած Հայաստանը դատուել է անվտանգ եւ ապահով երկրների շարքը:

Միաժամանակ կարելի է եզրակացնել, որ Հայաստանը զբօսաշրջութեան համար «բաց երկիր է»՝ այս ցուցանիշով երկիրը զբաղեցնում է 46-րդ տեղը: Նշուում է, որ այստեղ զբօսաշրջիկների սպասարկման գնները համեմատաբար մատչելի են, առողջապահական ծառայութիւնների աշխատանքը բաւարար է, ցածր է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով վարակուելու վտանգը:

Համաշխարհային տնտեսական ֆորումի հրապարակած այս գեկոյցում Հայաստանին նախորդում են Ալբանիան, Վիետնամը ու Սերբիան, իսկ յաջորդող 92-րդ եւ 93-րդ հորիզոնականները զբաղեցնում են Ղազախստանն ու Մոլդովան:

Զեկոյցի համաձայն զբօսաշրջիկների համար ամենահրապուրիչ երկրներն են Շուէյցարիան, Աւստրիան եւ Գերմանիան: Առաջատար տասնեակում նրանց յաջորդում են Ֆրանսիան, Կանադան, Իսպանիան, Շվեդիան, ԱՄՆ-ը, Աւստրալիան եւ Սինգապուրը: Ամենաանհրապոյրը, ըստ գեկոյցի, աֆրիկեան Չադը, Լեսոտոն եւ Բուրունդին են:

Մ. ՍԱՅԱԿՇՎԻԼԻ. «ՅՅ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ԱՆԿԱՆ ՊԱՏՃԱՌ ՌՈՒՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻՑ ԲԱՑԱՐՁԱԿ ԿԱԽՈՒԱԾՈՒԹԻՒՆՆ Է»

Վրաստանի նախագահ Միխայիլ Սահակաշվիլին յայտարարել է, որ ողբալի է այն երկրների վիճակը, որոնք իրենց բացարձակ կախման մէջ են դրել Ռուսաստանից, այդ թւում նշելով նաեւ Հայաստանի անունը: Այս մասին յայտնուում է «Civil Georgia»-ն: Վրաստանի նախագահն այս մասին խօսել է Մարտի 7-ին Թբիլիսիի արուարձանում կուպլա հիւրանոցային համալիրի եւ ժամանցային վայրի բացման արարողութեան ժամանակ:

Նրա խօսքով, Հայաստանի տնտեսութեան կրախը տեղի է ունեցել այն պատճառով, որ նա իրեն ամբողջութեամբ կախման մէջ է դրել Ռուսաստանից: «Երբ ռուսական շուկան փլուզուեց, ապա նոյն բախտին արժանացաւ նաեւ Հայաստանը», - յայտարարել է Սահակաշվիլին:

Նա նշել է, որ Վրաստանի հարեւան երկրների տնտեսութիւններում դժուարութիւններ են ծագել, սակայն Վրաստանը կանգուն կը մնայ: «Վրաստանը կանգուն կը մնայ, Վրաստանը կը փրկուի նոյնիսկ ամենածանր պայմաններում, եթէ մեզ մօտ լինի քաղաքական կայունութիւն», - յայտարարել է Վրաստանի նախագահը, յաւելելով,



Վրաստանի նախագահ Միխայիլ Սահակաշվիլի

որ իր իշխանութեան համար առաջնահերթութիւնը տնտեսութեան փլուզման կանխումն է:

Սահակաշվիլի խօսքով, Ռուսաստանը երեք տարի առաջ դուրս է մղել Վրաստանին իր շուկայից, սակայն դրանից յետոյ Վրաստանը ժամանակին կատարել է բարեփոխումներ, ինչն էլ օգնում է հիմա կայուն մնալ:

ՆԱԽԱԳԱՅ ՕՊԱՍԱ ՊԻՏԻ ԱՅՑԵԼԷ ԹՈՒՐՔԻԱ

Շարունակուած էջ 1-էն

NTV-ին տուած հարցազրոյցին մէջ Ալի Պապաճան յոյս չայտնած է, որ հայ-թրքական տարաձայնութիւնները չեն խոչընդոտէր Անգարայի եւ Ուաշինգթոնի գործակցութիւնը:

«Նոյնիսկ այս ցաւոտ հարցի շուրջ մենք ամերիկացիներու հետ կը շփուինք առանց որեւէ դժուարութեան», - յայտարարած է Պապաճան՝ ընդհանուր առմամբ բաւական բարձր գնահատելով Հիլըրի Բլինթընի այցի արդիւնքները: Շաբաթ օրը, Հիլըրի Բլինթըն Անգարայի մէջ յայտարարեց, որ յառաջիկայ մէկ ամսուայ ընթացքին նախագահ Պարաք Օպամա պիտի այցելէ Թուրքիա:

CNN-ի հիմնուելով պետական քարտուղարութեան աղբիւրներու վրայ, կը հաղորդէ, որ Օպամայի Անգարա այցը նախատեսուած է Ապրիլի սկզբին, Եւրոպա կատարելիք այցի աւարտին: Միւս կողմէ, Անգլիական «Ֆայնանշըլ Թայմզ» ազդեցիկ թերթը կը յայտնէ, որ Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամա ներկայիս կանգնած է երկընտրանքի առջեւ՝ կա՛մ դրժել Հայոց Յեղասպանութիւնը ճանչնալու իր խոստումը, կա՛մ վտանգել ռազմավարական դաշնակից

Թուրքիոյ հետ ԱՄՆ-ի երկարամեայ կապերը:

Թերթի մեկնաբանի կարծիքով, կարեւոր պահ կը նկատուի Ապրիլի 24-ը, երբ հայ ժողովուրդը պիտի նշէ Յեղասպանութեան զոհերու յիշատակի օրը եւ երբ Միացեալ Նահանգներու նախագահը հանդէս պիտի գայ ամերիկահայութեան ուղղուած խօսքով: Ըստ թերթի՝ բանաձեւի կողմնակից Գոնկրէսական կը պատրաստուին մինչ այդ, Ներկայացուցիչներու Տան մէջ ներկայացնել Յեղասպանութեան բանաձեւը:

Գոնկրէսականներու կարծիքով, վերջին շրջանին Թուրքիոյ պահուածքը աւելցուցած է բանաձեւի ընդունման հաւանականութիւնը: Մասնաւորապէս, Կազախի հատուածէն ներս Իսրայէլի ռազմական գործողութիւններու դատապարտումը Թուրքիոյ վարչապետ Ռեշիֆ Էրտողանի կողմէ, յառաջացուցած է վրդովմունք՝ հրէական եւ իսրայէլամէտ կազմակերպութիւններու մօտ, որոնք նախորդ բանաձեւի ժամանակ, ոչ բացայայտ կ'աջակցէին Թուրքիոյ:

Միացեալ Նահանգներու վարչակազմը կը շարունակէ կարեւոր նկատել թրքական «Ինջիր-լիք» ռազմակայանը, Իրաքի մէջ իրականացուող գործողութիւններու համար:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆ

Շարունակուած էջ 1-էն

Լուսնի ոտնահարման խնդիրին՝ Արմէն Յարութիւնեան յիշեցուց, որ այդ հարցին վերաբերող բոլոր հայցադիմումները Եւրոպատարանի կողմէ կը բաւարարուին:

Խօսելով օմբուղամենի ինստիտուտի հանդէպ հասարակութեան եւ քաղաքական ուժերու վերաբերմունքի մասին, Արմէն Յարութիւնեան ըսաւ, թէ ինք ընդդիմութեան եւ իշխանութեան ձեռքը կրակը ինկած է. երբ կ'ըսէ բան

մը, որը ի նպաստ է իշխանութեան, ընդդիմութեան կողմէ կը քննադատուի եւ երբ կ'ըսէ բան մը, որ դուր կու գայ ընդդիմութեան, իշխանութեան համար կը դառնայ «դրսի համար աշխատող»:

Հակառակ որ ՀՀ օմբուղամենը հրապարակեց 2008 թուականի տարեկան գեկոյցը, խորհրդարանը տակաւին ժամանակ չէ գտած քննարկելու մարդու իրաւունքներու պաշտպանի 2007 թուականի գեկոյցը:

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՋԱԲԱԽՔԸ

ԻԳՈՐ ՄՈՒՐԱԴԵԱՆ
«ԼՐԱԳԻՐ»

Ջալախքի նկատմամբ Վրաստանի վարած քաղաքականության ուղղութիւնները մէկն էլ Հայաստանի ազդեցութեան սահմանափակումն է տարածաշրջանի մշակութային եւ յատկապէս տնտեսական կեանքում: Վրաստանը բաւական խանդով է վերաբերում Ջալախքի ու Հայաստանի բնակչութեան գործարար շփումներին, որոնք ուղղուած են տարածաշրջանի տնտեսական զարգացմանը:

2006-ի ձմեռնային տեղի ունեցան բախումներ վրացական ու հայկական մաքսակէտերում, որոնց մասնակցում էր նաեւ Ջալախքի հասարակական կազմակերպութիւններից մէկը: Որովհետեւ եթէ մինչ այդ Հայաստանից ու Ջալախքից ապրանքները մաքսագերծուած էին Նիւնոմինդայի մաքսատանը, որը հայ-վրացական սահմանի վրայ է, ապա վրացական իշխանութիւնների որոշումից յետոյ Հայաստանից Ջալախք ներկրվող ապրանքները պէտք էր անցկացնել Բորժոմի մաքսակէտով, որը 250-300 կմ հեռու է: Կամ էլ յիշեալ մաքսակէտի մաքսակորներին բերել հայ-վրացական սահման: Այս որոշումը, անշուշտ, առաջին հերթին ուղղուած էր Ջալախքի հայ բնակչութեան դէմ, մանաւանդ որ հայ-վրացական սահմանի վրայ գտնուող Նիւնոմինդայի անցակետը, մաքրուել է հայերից եւ համալրուել բացառապէս վրացիներով:

Հայաստանի ջանքերով կառուցուած եւ մայր հայրենիքը Ջալախքի հետ կապող բարձրաուլտ էլեկտրահաղորդման գիծը եւս լիարժէք էր գործում՝ վրացական իշխանութիւնների ձեռնարկած խոչընդոտների արդիւնքում: 2005-ին նոյնիսկ քրէական գործ յարուցուեց այդ հաղորդագծի կառուցման համար հողահատկացման հետ կապուած, ձեռքարկուեց Ջալախքի շրջանային ղեկավարներից մէկը՝ Ռ. Արզումանեանը: Միայն երկարատեւ ու դժուարին պայքարից, հայկական բնակչութեան մշտական պահանջներից ու Հայաստանի միջամտութիւնից յետոյ բարձրաուլտ գիծը սկսեց օգտագործուել Հարաւային Վրաստանին կնքագրուած մատակարարելու համար: 2002-ի դեկտեմբերի 22-ին Վրաստանը, այնուհանդերձ, վաւերացրեց Եւրախորհրդի՝ ազգային փոքրամասնութիւնների պաշտպանութեանը վերաբերող շրջանակային համաձայնագիրը: 2006-ին վաւերացուեց տարածաշրջանային կամ փոքրամասնութիւնների լեզուներին վերաբերող եւրոպական խարտիան: Այս երկու հիմնական փաստաթղթերն են, որ հնարաւորութիւն պէտք է տան ազգային փոք-

րամասնութիւններին՝ պաշտպանելու իրենց իրաւունքները գոնէ այդ երկու ուղղութիւններով: Վրաստանն էլ, անշուշտ, չի կարող ամբողջութեամբ անտեսել ստանձնած պարտաւորութիւնները, սակայն, իհարկէ, չի հրաժարուի էթնիկ փոքրամասնութիւններին դուրս մղելու քաղաքականութիւնից:

Հայաստանում՝ տարածաշրջանային փորձագէտների շրջանակում, ձեւաւորուել է կարծիք, թէ Վրաստանը, սրելով քաղաքական յարաբերութիւնները Հայաստանի հետ, կարող է նոյնիսկ դիմել կոմունիկացիաների փակման քաղաքականութեան: Արդիւնքում Հայաստանը կը չաչտնուի գրեթէ լիակատար շրջափակման մէջ: Իհարկէ, որոշակի պայմաններում Վրաստանը կարող էր դիմել այդ քայլին, սակայն հազիւ թէ այդ քաղաքականութիւնն առարկայական է ներկայումս, քանզի հիւանդանոցային արտաքին գործօններ: Ամէնից առաջ հարկ է գիտակցել, որ եթէ Վրաստանն ի վիճակի լինէր կիրառելու նման քաղաքականութիւն, դա կ'անէր աւելի վաղ: Սակայն ոչ միայն Հայաստանը, այլեւ Վրաստանն անվտանգութեան տեսանկիւնից բաւական խոցելի են իբրեւ պետութիւններ: Վրաստանում գնալով աւելի զգալի է դառնում թուրք-ատրպէյճանական դաշինքի քաղաքական ռազմավարութեան ազդեցութիւնը, որը, անշուշտ, նպաստակ ունի Վրաստանն ամբողջութեամբ ընդգրկելու իր ուղեծրում: Կորսուած են յոյսերը Աբխազիայի ու Հարաւային Օսիայի նկատմամբ վերահսկողութեան հաստատման եւ Ռուսաստանի հետ հակադրութեան յղթահարման վերաբերել: Բոլոր սպասումները, կապուած «Եւրասիական միջանցք» նախագծի հետ, չարդարացան, իսկ ԱՄՆ-ի շարունակական փորձերը՝ վերակողմնորոշել Կեդրոնական եւ Հարաւային Ասիան, աւելի ու աւելի լոկալ են դարձնում վրացական կոմունիկացիաների նշանակութիւնը: Վրաստանն այդպէս էլ չի ստացել երկար սպասուած ռազմավարական ներդրումներ տնտեսութեան մէջ, որոնք կը մղէին տնտեսական զարգացման, եւ առայսօր լուրջ կախուածութիւն ունի արտաքին օժանդակութիւնից:

Այս պայմաններում Հայաստանը կարող է դառնալ կարեւոր տնտեսական գործընկեր, որի մասնակցութիւնը վրացական տնտեսութեան զարգացման գործում այլընտրանք կը դառնայ թուրքական ու ատրպէյճանական ներդրումներին: Վերջին երեք տարիներին Հայաստանը ցոյց տուեց, որ կարող է ակտիւորէն ներկայացուած լինել վրացական տնտեսութեան մէջ: Ներդրումներ են կատարուել արանսպորտային ոլորտի ձեռնար-



կութիւններում, ծխախոտի արդիւնաբերութեան մէջ, բանկերում եւ կուրորտների զարգացման ոլորտում: 2008-ին հայ-վրացական առեւտրաշրջանառութիւնը հասաւ 136 մլն տոլարի: Անցած իրադարձութիւններն էլ ցոյց տուեցին, որ Վրաստանը զգուշանում է Ատպէյճանի մասնակցութիւնից, մասնաւորապէս նաւահանման գարգացման ուղղութեամբ ներդրումների առումով: Այն դէպքում, երբ Հայաստանի մասնակցութիւնն այդ ոլորտում միանգամայն ողջունելի է:

Նկատի ունենալով դէպի թուրքական շուկաներ Հայաստանի առջեւ դրուած սահմանափակումները, ինչպէս նաեւ այն, որ իրանական շուկան ենթակա է ուժեղ պրոտեկցիոնիզմի, Վրաստանը Հայաստանի համար առաւել մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում արդիւնաբերական եւ տրանսպորտային ոլորտներում ներդրումների տեսանկիւնից: Այն բանից յետոյ, երբ Վրաստանում վրայ հասաւ հիասթափութիւնը, Եւրասիական միջանցքի նախագծի հետ կապուած, թերլիսիում սկսել են աւելի ուշադիր դիտարկել գեո-տնտեսական նշանակութեան այլ նախագծերը՝ ամէնից առաջ Իրանի հետ տնտեսական կապերի խորացման տեսանկիւնից, եւ այդ համատեքստում հաշուի է առնուած հայկական փորձը: Իրանի հետ կապուած վրացական մտադրութիւնները հաշուի առնելով՝ Հայաստանի դերը մեծանում է, նկատի ունենալով կոմունիկացիաներն ու եռակողմ տնտեսական համագործակցութեան հնարաւորութիւնները:

Վրաստանում ընդհանուր առմամբ շատ քաղաքական գործիչներն են վարչարարների հրապուրում է Հայաստանի տնտեսական զարգացման փորձը, որը 1990-ականների երկրորդ կէսից ընթանում է տնտեսութեան իրական սեկտորի, ամէնից առաջ արդիւնաբերութեան զարգացման ուղղութեամբ: Վրացական կողմի համար հետաքրքրութիւն է ներկայացնում նաեւ Հայաստանում պետական մասնակցութեան ձեւաչափը տարբեր արդիւնաբերական նախագծերի իրագործման առումով: Թերլիսիում շատերն են հասկացել, որ հասել է ժամանակը, այսպէս կոչուած, լիբերալ մտեցումներից անցնելու տնտեսական առաջնահերթութիւնների քաղաքականութեան:

Ինչը ենթադրում է յարաբերութիւնների զարգացում Ռուսաստանի ու Իրանի, այսինքն՝ խոշոր տէրութիւնների հետ, որոնք տիրապետում են բազմաբնոյթ ռեսուրսների, կնքագրից եւ հումքի աղբիւրների, խոշոր շուկաների: Վրաստանում տեսակէտ է ձեւաւորուում, որ ակտիւ տնտեսական ու սոցիալական զարգացումը հնարաւոր է միայն բազմակողմ գործակցութեան արդիւնքում: Այս դիրքորոշումը նպաստում է հետաքրքրութեան մեծացմանը Հայաստանի հետ յարաբերութիւնների առումով, որը մասնակի շրջափակման պայմաններում կարողացել է վերականգնել իր կնքագրութեան, արդիւնաբերութիւնը, ապահովել դինամիկ զարգացում՝ իրական տնտեսութեան ոլորտում համագործակցութեան շնորհիւ:

«972 ՀԱՋԱՐ ՀԱՅԵՐՈՒ ԱՆՅԵՏԱՑՈՒՄԻՆ ՇՈՒՐՁ ԹՈՒՐՔԵՐԸ ՄԱՏՆՈՒԱԾ ԵՆ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ԿՈՐՈՒՄՏԻ»

Շարունակուած էջ 1-էն

րուն, միշտ ալ կը յառաջացնէ հանրային կարծիքի մօտ փոթորիկ: Սակայն, Յունուարին, գրքի մը մէջ հրապարակուելէն ասդին, թիւի եւ աղբիւր մասին ոչ մէկ յիշատակութիւն կը կատարուի:

Թերթերը հազիւ թէ կը գրեն այդ մասին: Հեռատեսլի վրայ ոչ մէկ քննարկում այդ մասին»,- կը գրէ Սպարինա Թավերիս:

Գիրքի հեղինակ Մուրատ Պարտաքճի, յայտնած է թէ, այս լուր-թիւնը կը նշանակէ մէկ բան. «Իմ թուանշանները շատ բարձր են պարզ քաղաքացիներուն համար եւ կամ ժողովուրդը տակաւին պատրաստ չեն խօսելու այդ մասին»:

Պարտաքճիի գիրքի անունն է «Թալաթ ֆաշայի Մնացեալ փաս-

տաթուղթերը» եւ կը պարունակէ հայերու տեղահանութիւններու գլխաւոր կազմակերպիչ Մուհամատ Թալաթ ֆաշային պատկանող փաստաթուղթերու եւ գրութիւններու հաւաքածոն: Այս փաստաթուղթերը գիրքի հեղինակին յանձնուած են Թալաթի այրիի կողմէ, անոր մահուանէ առաջ՝ 1983-ին:

Փաստաթուղթերը կը պարունակեն ցուցակներ՝ բնակչութեան թիւերու մասին: 1915-էն առաջ 1,256,000 Հայեր կ'ապրէին Օսմանեան Կայսրութեան մէջ՝ փաստաթուղթերուն համաձայն: Այս թիւը երկու տարի ետք իջած է 284,157-ի:

«Նիւ Եորք Թայմզ» յօդուածը տեսնել «Մասիս» Անգլերէն բաժինին մէջ:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՀ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA ՀԵՌԱՉԱՅՆԵԼ (626) 797-7680

ԳՐԱԿԱՆ

ԳԻՏԱՊԱՏՈՒՄ

ՆՈՅ ՆԱՀԱՎԵՏԻ ՎԵՐԱԴԱՐՁ

Նախորդ երկու համարներով.- Արմալիի բնակիչ Նորայր, իր քննարկով, կը փոխադրուի տիեզերանավ մը ներս ուր երկարամտությամբ օդերու մը ինքզինք կը ներկայացնէ որպէս Նոյ մահապետ: Նոյ իրեն կը պատմէ թէ ինչպէս, Մեծ Ջրհեղեղէն երեք հարիւր յիսուն լուսնային ամիսներ ետք, արտերկրեայ լուսնէն էակներ զինք զիշերանց փոխադրեցին իրենց տիեզերանավը եւ վերականգնացուցին: Ապա զինք տարին Տիեզերապետին մօտ, որու յանձնարարութեամբ հիմա փրկարար առաքելութիւններ կը կատարէ տարբեր մոլորակներ, որոնց բնակիչները գոյատեւման կենսաց-մահու լուրջ խնդիրներ կը դիմագրաւեն:

Նոյ կը յայտնէ նաեւ իր այս առաքելութեան նպատակը - Տիեզերապետին ներկայացնելու համար, պատրաստել հաշուետու զեկուցում մը՝ ներկայիս երկիր մոլորակի եւ իր բնակչութեան դիմագրաւած համապարփակ ճգնաժամի հիմնախնդիրներու մասին: Այդպիսի խնդիրներ են՝ մթնոլորտի ապակեման, անջրպետէն սպառնացող վտանգները, անջատ-անջատ պետութիւններու ամբողջական ձախողութիւնը, խաւարամիտ քաղաքագետներու կարծատեսութիւնը, եւ մարդու կողմէ մոլորակի բռնաբարման հետեւանքով նախկինէն շատ աւելի մահացու ջրհեղեղի մը սպառնալիքը:

Ա. Թ.

ՄԱՀԱԿ ԹՈՒԹՅԱՆ (Շարունակում առաջադ թիւ 15)

ՀԱՅԿԻ ԹՈՒԹՅՆՆԵՐ

Նորայրի ուսերը թուրքէն վար կախուեցան՝ խոր յուսահատութեան անձնատուր: Ներքին անգուսպ, համայնակուլ փոթորիկի մը քմայքոտ հոսանքներուն եւ ամենագոր բախումներուն յանձնուած անգոր թուրքիկի մը պէս կը զգար ամբողջ հուլիսեամբ՝ անել յուսահատութեան ու դէպքերու խօլ ընթացքը կասեցնելու անկարողութեան անթափանց ամպերու տակ: Գլուխը առաւ իր դողդողացող ակերտուն մէջ, քարացած աչքերը սեւեռեց գետին: Եւ երկիր մոլորակին վրայ իրենց խաչաբեղէտ անդէկ կեանքերը կերպով մը քարշտուող մարդերու ձախորդութեան եւ ապիկարութեան ամբողջ ծանրութիւնը իր վրայ վերցնելով, դանդաղորէն վեր առաւ յոգնած գլուխը եւ ուժգին հեկեկանքի նմանող ցնցումներուն ընդմէջէն գոռաց:

- Ուրեմն այսքան պարզունակ է հարցը, սիրելի Նոյ նահապետ: Ուրեմն պարզ տիեզերական փորձարկումի առարկայ էակնե՞ր ենք ես ու իմ նմանները՝ մեր թշուառ բախտին ձգուած, անպաշտպան եւ աննպատակ: Այո, Տիեզերապետը մեզի տուաւ նիւթական ձեւ ու կառուցային բովանդակութիւն, տուաւ մարմին ու զայն հակակշռելու սահմանուած մտային որոշ կարողութիւններ: Բայց մեր նիւթեղէն շինուածքին ամբողջ ներքին անջրպետը, որ նիւթեղէնէն բազմամիլիառ աւելի է իր ծաւալով ու նշանակութեամբ, ան ողորդեց մարդուն համար անհասանելի եւ

անըմբռնելի այնպիսի թաքուն առեղծուածով մը ուր քառու տէրն ու տիրականն է մեր ճակատագրին - ճիշդ այն քառուին նման որ երէց ու բունակալ գործընկերն է՝ գոյուլթիւն ունեցող համայն Տիեզերքի օրինաչափ հրաշալի համակարգին: Տիեզերապետին ստեղծագործած իւրաքանչիւր մարդ էակի ներքին քառու բազմամիլիառ աւելի խոր եւ առեղծուածային է քան այն գիտակցուած չնչին որուն գէթ մասամբ ծանօթանալու առիթը կ'ունենանք մեր կեանքի ծիծաղելիօրէն կարճ տեւողութեան ընթացքին: Իսկ հիմա անճրկած մարդ էակի անգոր ուսերուն վրայ կը բարդես սա քառային բազմամիլիառապատիկը որ թաքնուած է՝ իր արտաքին տեսանելի ծաւալի ներքին անսահման անջրպետէն ներս - բայց որ յուսատարիներով (10) հեռու կը մնայ իր հասողութեան ու հակակշռի ծիրէն: Ես չեմ կրցած հասկնալ Տիեզերապետին վերագրուած խաղին օրէնքները: - Հա՛, ինչ հեշտ է քու յատկորոշիչներով (11) շինել ու շնչաւորել ապրող արարած մը, շինել էտք անգամ մը սանկ նայիլ իր շարժուածքներուն ու պահուածքին, ապա քու շինածիդ պակասներուն ու վարքութեան թերիներուն համար պատասխանատու հռչակել շինուածը: Ու մէ՛կ հարուածով պատժել ու ոչնչացնել զայն (կարգ մը ամենագէտներ աւելի նպատակաշարմար կը գտնեն զինք ողջ-ողջ յաւերժ խորովել կրակով ու ծծումբով)՝ ինչպէ՛ս որ թելադրէ խիղճդ - կրակ, երկրաշարժ, ջրհեղեղ, երկինքէն ինկած հակայական ժայռազանգուած, կամ ցանկացած «պատշաճ» արհաւիրք ըստ պատուէրի: Եղա՞ւ ասիկա:

Նոյ նահապետը վարանեցաւ հակադարձել անմիջապէս: Երկար, շատ երկար նայեցաւ Նորայրին: Ինկաւ խոր մտածումներու մէջ: Քալեց աջ, ապա՝ ձախ: Քանի մը անգամ դարձաւ իր խօսակիցին շուրջ: Դարձեալ շուրջ մօրուքը, շփեց ճակատը, իրարու սեղմեց շրթները, իրար վրայ ծալլեց ձեռքերը, եւ որոշեց խօսիլ վերջապէս:

- Քառուն ու ստեղծագործութիւնը յաւիտենական համակեցութեամբ կը գոյակցին Տիեզերապետի ներաշխարհին մէջ: Անոնք նոյնպէս առկայ են իր համայնապարփակ օրինաչափութիւններուն հպատակող տիեզերական դրուլթեան մէջ: Ամբողջ Տիեզերքի անհունութեան մէջ չկայ որեւէ ամենայնոք մասնիկ, փոքրագոյն հիւլէ, ամենաչնչին էակ, մոլորակ, աստղ, կաթնածիր, ծանօթ կամ անծանօթ որեւէ տեսակի եւ չափի երկնային մարմին որ ամբողջական ու վերջնական քառու ըլլալ կամ ամբողջական ու վերջնական ստեղծագործութիւն: Հետեւաբար, իրերու տիեզերական յօրինուածքի եւ դրուլթեան մէջ, ստեղծագործուած իւրաքանչիւր մասնիկ պատասխանատու է իր անբաժանելի գործընկերն եղող քառուին: Ընդհ Նոյն կերպով ալ մարդ էակը պատասխանատու է իր շինուածքի պարփակած միլիառապատիկ տարողութեամբ գոյութենական ներքին քառուին: Ասիկա անխուսափելի է: Միւս կողմէ, սակայն, կ'ուզեմ վստահեցնել քեզ թէ Տիեզերապետը իր ստեղծագործութիւններու յաւերժական խորովածով կամ պատժիչ արհաւիրքներու պատուէրով չի զբաղիր: Ատոր ժամանակ ալ չունի: Այդպիսի արտառոց պատկերումները մարդկային թերաճ միտքերու վրիպանքներն են միայն:

Նորայր երկար չսպասեց պատասխանելու համար:

- Անմահ տիեզերատիպ իմաստութիւնն է որ կ'արտահոսի քեզմէ, իմ Նոյ նահապետ: Պիտի փորձեմ նոյնպիսի հոսքով առաջնորդել իմ ալ մտածումներս ու խօսքերս: Նախ, իմ պատկանած ժողովուրդս առնուազն չորս հարկար ութը հարիւր տարեկան է, այսինքն ծնունդ առած է նոյն այն տարին երբ դուն ելար տապանէդ դուրս՝ որպէս իր առաջին ներկայացուցիչը: Անշուշտ կը յիշես այդ օրերը երբ սկիզբը դրիր հայ ժողովուրդի անկարելի մօտ պատմութեան՝ այն հողին վրայ որ աւելի ուշ կոչուեցաւ հայկական լեռնաշխարհ: Դուն նահապետն ու նախահայրն ես մեռած

եւ ապրող բոլոր հայորդիներուն, որոնց գիտակցութեան մէջ դեռ պլպլացող իմացական լոյսը եւ որոնց միտքը մթազնող տգիտութեան քառու - կը ներս համարձակութեանս - հաւասարապէս ժառանգած ենք քեզմէ՝ Աստուծոյ բարեպաշտ ընտրեալէդ: Ես ալ, իմ կարգիս, մէջս կը կրեմ իմ ժողովուրդիս իմաստութիւնն ու տգիտութիւնը համարեա հաւասար չափով, այսինքն լոյսն ու քառու ինձմէ ներս եւս անտրակելի համակեցութեան մը մէջ են: Այդ ներքին Արշակաւանին մէջ ակամայ կը գոյակցին ազգային գիտակցութիւն կոչուածն ու համազգային գաւառայնութիւնը, մշակութային ինքնութիւն որակուածը եւ ամէն տեսակի ճշմարիտ արժէքներէ արագաթուրիչ փախուստը, պատմական սեւի ու ճերմակի շլացուցիչ ամբողջ կայծակն ու որոտումը, քարացած ամուլ ու յոգնաբեկ միտքերու ցուցահանդէս հանդիսացող կրօնական խառնափնթոր ու դժուար քակուելիք երկներանգ փաթեթները - որոնք յաճախ շօշափելի կորիզ մը ներփակելով հանդերձ, առհասարակ էապէս չփոթ թոթովանքներ են, լոյսի եւ քառուի համատեղ խառն տատանումներ: Գիշերները իմ մենութեանս առթած ամբողջական անկեղծութեանս պահերուն յանկարծ կը զգամ իմ ժողովուրդիս գրեթէ հինգ հազարամեակներու հասնող պատմութեան ամբողջ ծանրութիւնը՝ իրագործումներու եւ ընդմիջտ կորած առիթներու համատեղ հիւսուածքով: Կ'ընդվզիմ՝ իմ մէջս դեռ յամառող նախապաշարումներուն, տգիտութեան, կամքի եւ քաջութեան ահաւոր վարանքին դէմ: Կը ջանամ հետեւիլ՝ ինձի տրուած իմ իսկ զգաստութեան խրատներուս ու ողջմտութեան յորդորներուս: Բայց, յաճախ, իմ մէջս յամեցող հին խաւարը, տարակուսանքը, ծուլութեան հեշտամոլութիւնը եւ քարայրաբնակութեան օրերէն ժառանգած վախը կը հալածեն զիս, կը ջլատեն ազատ միտքի թուրքներս, զիս հեռու կը պահեն իմ ժողովուրդիս» սիրտին ու հոգիին ամենէն հարագատ ակունքներէն: Սակայն եթէ կ'ուզեմ հաւատարիմ մնալ իմ գոյութեան խորհուրդին, պէտք է պատուեմ խաւարը՝ գտնելու համար այդ ակունքներուն հասնելու ճշմարիտ ուղղութիւնը: Ակունքը՝ կեանքի եւ իմացականութեան ծաղիկը հանդիսացող բանական եւ զգայուն մարդ էակներու լուսամիտ

Շար.ք էջ 18



Authorized Agent
Blue Shield of California
An Independent Member of the Blue Shield Association



A.B.A. INSURANCE SERVICES

SERVING SINCE 1975

BEDROS S. MARONIAN

(818) 500-9585
CA LIC. #0494056 • BMaronian@AOL.com

FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

ԵՐԹԵՔ ՈՒԾ ՉԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱԽՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՄ ՎԻԿՏՈՐ ՇԱՐԲԱՐՁՈՒՄԵԱՆ (ԾՆՆԴԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

Հայ ժողովուրդի հանճարեղ գաւազներէն աշխարհահռչակ աստղաբնագէտ Վիկտոր Համբարձումեանի ծննդեան 100-ամեակին էր նուիրուած Նոր Սերունդ Մշակութային Միութեան վերջին միջոցառումը:

Արդարեւ, Փետրուար 13ին, 2009, ընտրանի հասարակութիւն մը փութացած էր Կլենտէյլի Հանրային Գրադարանի հանդիսարան՝ նշելու համար պանծալի հայուն տարեդարձը:

Ն.Ս.Մ.Մ.ի վարչութեան ատենապետ՝ Յարութ Տէր-Դաւիթեան, իր բացման խօսքին մէջ ազգային հպարտութեամբ անդրադարձաւ համաշխարհային ճանաչումի արժանացած բազմաթիւ գիւտերու հեղինակ՝ Վիկտոր Համբարձումեանի հարուստ ժառանգութեան մասին:

Այնուհետեւ՝ Վիկտոր Համբարձումեանի կեանքի գլխաւոր հանգրուաններուն եւ աշխատանքին ուրուագծումն ըրաւ Սեդա Հայկ, որ հոգեբանութեան եւ խորհրդատուական մասնագիտութիւններով շրջանաւարտած է Քալիֆորնիոյ UCLA եւ CSUN համալսարաններէն:

Սեդա Հայկ վեր առաւ Համբարձումեանի բացառիկ արժանիքները որպէս հայ ժողովուրդի ամբողջ պատմութեան մեծագոյն հանճարներէն մէկը, եւ նոյն ատեն 20րդ դարու գիտական հայեցողութեան կերտման աստարած համաշխարհային ամենէն ազդեցիկ առաջին երեք ականաւոր գիտնականներէն մէկը: Այս վերջին գնահատականը՝ ըստ Թաքսոմ շաբաթաթերթի կողմէ 19 Յունուար 2000-ին հրատարակուած հարցախոյզի մը:

Զեկուցաբերը նախ արագորէն տուաւ դպրոցական եւ համալսարանական տարիները, երբ արդէն իր հետաքրքրութեան կեդրոնն էին գիտութիւնն ու մաթեմատիկան ընդհանրապէս եւ աստղագիտութիւնն ու տեսական աստղաբանագիտութիւնը (աստղաֆիզիկան) մասնաւորապէս: Ծնած Թիֆլիս, 18 Սեպտեմբեր 1908ին: Հազիւ 16 տարեկան, յայտնի գրականագէտ-բանասէր իր հօր Համազասպ Համբարձումեանի ճիգերով Լենինկրատի համալսարանը կ'ընդունուի, ուրկէ շրանաւարտ կ'ըլլայ 20 տարեկանին՝ 1928ին: Ուսումը կը շարունակէ Բուլղարիոյ աստղագիտարանը, ուրկէ նոյն ատեն մեծաթիւ գիտական աշխատասիրութիւններ կը հրատարակէ գերմաներէն լեզուով՝ գերման աստղագիտական համբաւաւոր պարբերաթերթերու մէջ: Լենինկրատի պետական համալսարանի դասախօս է 1931-1934 թուականներուն, ուր փրոֆեսորի տիտղոսը կը ստանայ 1934-ին, 26 տարեկանին, եւ ուր կը նշանակուի Սովետ Միութեան նորաստեղծ աստ-



դաբնագիտութեան անդրանիկ ամպիոնի առաջին վարիչ-փրոֆեսորը:

Երկրորդ աշխարհամարտի աւարտին վ. Համբարձումեան կը վերադառնայ Հայաստան, ուր Արագած լեռան կողին, ծովէն 4,090 մեթր բարձրութեան վրայ, 1946ին կը հիմնէ Բիւրականի աստղաբանագիտական աստղադիտարանը: Երեւանի պետական համալսարանի աստղագիտութեան փրոֆեսոր է 1947էն սկսեալ: Նոյն տարին կ'ընտրուի Հայաստանի գիտութիւններու ակադեմիայի նախագահ եւ հոն երկարամեայ բերուն գործունէութիւն կը ծաւալէ մինչեւ 1993: Այդ տարի կ'ընտրուի ցմահ պատուակալ նախագահ, որմէ երեք տարի ետք կեանքին եւ այնքան սիրած աստղերուն հրաժեշտ կու տայ 12 Օգոստոս 1996ին:

Համբարձումեան եղած է գիտական յառաջն ուսումնասիրութիւններու հեղինակ եւ նոյն ատեն գիտահրատարակչական ձեռնարկներու առաջնորդ: Հայաստանի մէջ ան հասցուց գիտաշխատողներու փայլուն դպրոց մը որ ամբողջ աշխարհի յառաջապահներէն էր: Մօտաւորապէս 20,000 գիտնականներ կը գործէին Հայաստանի մէջ 1985ին: Իր հեղինակութեան կամ խմբագրական աշխատանքին արգասիքն են բազմահարիւր աստղաբանագիտական գիրքեր, դասագիրքեր, գրքոյկներ, յօդուածներ, պարբերագիրքեր, Հայկական Սովետական Հանրագիտարանը (12 հատոր), եւ այլն:

Միջազգային աստղագիտական միութեան փոխ-նախագահ էր 1948-1955, եւ նախագահ՝ 1961-1964: Գիտական ընկերութիւններու միջազգային խորհուրդի նախագահ եղաւ 1970-1974:

Ամբողջ աշխարհի տարածքին մօտաւորապէս 25 գիտական-աստղագիտական ակադեմիաներու անդամ ընտրուեցաւ, 15-է աւելի գիտական ընկերակցութիւններու

Շար.ը էջ 17

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՏԻՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ

Մերտինեան Վարժարանէն ներս կրօնական եւ ազգային ամէն տօն կը յիշատակուի յատուկ գեղարուեստական յայտագիրներով որոնց միջոցով աշակերտներու մտքին մէջ խորապէս կը տպաւորուի օրուան խորհուրդը եւ միաժամանակ անոնք կը ներշնչուին կրօ-

նը տալէ ետք, ան յայտնեց որ Վարդան ո'չ թէ երիտասարդ տարիքին հայրենիքը պաշտպանելու համար պայքարի գնաց, այլ՝ 62-64 տարեկանին, երբ ընտանիքի ու գաւազներու տէր էր եւ ունէր հանգիստ կեանք ապրելու բոլոր պայմանները: Ան քաջ գիտէր որ



Մերտինեան Վարժարանի աշակերտները ելոյթի պահուց

նական եւ ազգային հերոսներու սքանչելի օրինակներով:

Այսպէս տօնուեցան Գոհաբանութեան եւ Սբ. Ծնունդի տօները եւ անցեալ շաբաթ անոնց հետեւեցաւ «Վարդանանց Օր»ուան յիշատակումը:

Քաջն Վարդանի ու Ղեւոնդեանց տօնին նուիրուած յայտագրի գործադրութիւնը տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 18 Փետրուար, 2009, առաւօտեան գլխաւոր բաժինը, նաեւ իրենց մասնակցութիւնը կը բերէին Ծր. եւ Դր. կարգերը:

Զ. կարգէն Անի Կէվճեանը բարի գալուստի խօսքերով ողջունեց ներկաները ապա՝ հակիրճ կերպով անդրադարձաւ Վարդանանց պատմական դէպքին եւ ատոր բարերար ազդեցութեան՝ հայապահպանման գծով, 15 դարերէ ի վեր:

Յայտագրի գեղարուեստական բաժինը սկսաւ աշակերտական խմբերգներով՝ «Ով Կենդանի Հաւատք Մեր Հարց», «Իմ Հայրենեաց Հոգի Վարդան» եւ «Հայ Ապրինք Եղբայրք»:

Երիտասարդ տարիքէն այսքան գնահատելի ձեռքբերումներ ունեցած Արթուր Ավանեսով Լոս Անճելըս եկած էր Նիւ Եորքէն սոյն դասախօսութեան համար: Իր բացառիկ ելուցիւթը, թէ նկարագրական եւ թէ մանաւանդ իր սեփական գործերու մատուցումով, ուղղակի հմայեց ներկաները, այնքան որ արդիական նկատուած իր ստեղծագործութեանց մէջ, Ավանեսով կարողացած էր հայկական դասական երաժշտութեան նմուշներ ընդգրկել:

Դասական եւրոպական երաժշտութեան պատմութիւնը ճոխ է մանուկ եւ երիտասարդ հասակի տաղանդ-հանճարներով, որոնք կը կոչուին, Մոցարթ, Մենտելսոն, Սէն Սանս եւ ուրիշներ: Բնաւ կասկած չունինք որ Արթուր Ավանեսով, այս դասակարգի պատկանող տաղանդ-հանճար մըն է, որ պիտի շարունակէ ստեղծագործել, եւ զարմացնել ոչ միայն իր սեփական հայ ժողովուրդը, այլ համաշխարհային երաժշտական շրջանակները:

Մեր գնահատանքը եւ յաւելուեալ յաջողութեան մաղթանքները Արթուր Ավանեսովին, եւ շնորհակալութիւն Լարք երաժշտական Ընկերութեան մեզի ընծայուած վայելքին համար:

ԱՐՄԷՆ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Շուրջ երկու տարիներէ ի վեր, պարբերաբար ներկայ կ'ըլլամ Պըրպլէնքի «Forest Lawn»-ի գեղեցիկ եւ տպաւորիչ հանդիսասրահին, «Liberty Hall»-ի մէջ, մաէսթրօ Արմէն Կարապետեանի ճարտար ղեկավարութեամբ, «New Valley Symphonyn orchestra»-ի յայտագրերուն, որոնք, ամէն անգամ լուրջ եւ ուշադիր ծրագրման կ'արժանանան, յայտագիրներ որոնք ներկայ խանդավառ եւ երաժշտասէր հասարակութեան, հայ եւ օտար լուրջ գնահատանքին եւ ինչու չէ,

նաեւ հոգեկան գոհացման: «Orchestra»-ն բազմամարդ խումբ մըն է, շուրջ 60 նուագազոյններէ բաղկացած, եւ յազեցած ամենատեսակաւոր գործիքային նուագոյններէ, որոնք ամենայն վարպետութեամբ եւ արհեստավարժութեամբ կը կատարեն դասական դժուարին ստեղծագործութեանց ծրագիրները: Ինքը, Արմէն Կարապետեան, նախքան այս խումբին գլուխը անցնելը, ղեկավարած է բազմաթիւ այլ նուագախմբեր, տարբեր քաղաքներու մէջ, օրինակի համար, «Honolulu»-ի «symphonic orchestra»-ն եւ ուրիշներ: Արմէն ծնած է Երեւան եւ վեց տարեկանին սկսած է ջութակ նուագել, ապա իր ուսումը շարունակել է Երեւանի Չաչբովաքի անուան երաժշտական դպրոցին ներս: Ապա Երեւանի ռատիոյի եւ թելեվիզիոյի անսամպլի մէջ իբրեւ ջութակահար: Ամերիկա փոխադրուելէն ետք, կը ղեկավարէ բազմաթիւ նուագախմբեր, հասնելու համար այժմու խումբին, որ կը կոչուի «New Valley Symphony Orchestra»: Հետեւելով ուրեմն այս խումբի կատարումներուն, մեծ գնահատանքով կ'ուզեմ արտայայտուիլ իր ընտրած բազմատեսակ յայտագրերուն, թէ անձնական կատարողներու եւ թէ ալ խմբային ստեղծագործութեանց:

Անձնապէս ինծի համար բացառիկ վայելք էր իր վերջին յայտագիրը, որ բացառաբար բաղկացած էր օփերայի նմուշներէ, նմուշներ որոնք լուրջ ժողովրդականութիւն ունին եւ ծանօթ են ունկնդիր լայն հասարակութեան: Պէտք է նաեւ յատկապէս նշեմ որ Արմէն իր խումբէն ներս կը քաջալերէ եւ կ'ընդունի հայ արուեսագէտներ, որոնք թէ կը յաջողին տպաւորել ներկաները, եւ թէ ալ առիթը կ'ունենան ծանաչում ստանալու ոչ-հայ շրջանակներու կողմէ: Այսպէս, իր վերջին ղեկավարած համբերը, որուն կը մասնակցէր Պրպլէնք քաղաքի երգչախումբը, Միխայիլ Շթան-Կրուտի ղեկավարութեամբ ունէր օփերայի լուրջ բովանդակութիւն:

Յայտագրի բացումը կը կատարէր վերտիի ծանօթ եւ հռչա-

կաւոր «La Traviata» օփերայի նախերգանքով, օրքեսթրայի յաջող կատարումով: Ապա, հայ թենոր երգիչ Էտկար Պրուլեան յաջողութեամբ կը մեներգէր օփերայի ծանօթ եւ սակայն դժուարին գործեր, ինչպէս վերտիի օթելլօ օփերային Օթելլոյի «արիա»-ն, Լա թրավաթիայի մէկ կտորը, Փուչչիի «Թօսքա»-ն «արիա» մը, միշտ նուագախումբի ընկերակցութեամբ, իսկ գուգերգ մը դարձեալ Լա թրավաթիային, հրաշալի սօփրանօ Լիլի Գէորգեանի, եւ երգչախմբի ընկերակցութեամբ: Էտկար Պրուլեան օտուած է թենորի յատուկ գեղեցիկ ձայնով եւ վստահեմ, ժամանակի ընթացքին, կրնայ դառնալ փնտուած երգիչ մը մեր շրջանակներէ ներս: Յայտագրի մէջ կար նաեւ ծանօթ ջութակահար ձօ Բեթենճեանը, որ գեղեցիկ կերպով նուագեց Պեթովենի «Romance»-ը: Կ'ուզեմ այս ակնարկը աւարտել երիտասարդ, տաղանդաւոր եւ գեղեցիկ ձայնով օտուած, սփրանօ երգչուի Լիլի Գէորգեանի մասին, որ չեմ սխալիլ եթէ յայտնեմ որ անվարան հանդիսացաւ ամբողջ յայտագրի ամենէն ակնառու եւ տպաւորիչ կատարողը: Լիլի մաս կը կազմէ ընտանիքի մը որ օտուած է երաժշտական շնորհներով, հայրը մաս կը կազմէ այս նուագախումբին: Լիլին շնորհալի աշակերտուհին է ծանօթ դաստիարակ էլլադա Չախոյեանի, որուն ցուցմունքներով ան կը կատարէ իր երգչուհիի արուեստը: Վստահ եմ Լիլի Գէորգեան մօտ ատենէն պիտի գրաւէ դասական երաժշտութեան հանդէպ լուրջ ուշադրութիւն ունեցող շրջանակներու, եւ իր նման այլ հայ երգչուհիներու հետ բարձր պիտի պահէ հայու համբաւը: Այս առթիւ, մեր շնորհաւորութիւնները մաէսթրօ Արմէն Կարապետեանին, իր ղեկավարած տպաւորիչ նուագախումբին, եւ յատկապէս այս յայտագրի մաս կազմող հայ արուեստագէտներուն, ձօ Բեթենճեանին, Էտկար Պրուլեանին եւ Լիլի Գէորգեանին:

Յ.Ս.

Saint Gregory's Ladies Society
CORDIALLY INVITES YOU TO THE

44th Annual

LUNCHEON & FASHION SHOW

Around The World



SATURDAY, APRIL 4, 2009

THE LANGHAM,
HUNTINGTON HOTEL & SPA
(FORMERLY RITZ CARLTON)

1404 SOUTH OAK KNOLL AVENUE
PASADENA, CALIFORNIA 91106

BOUTIQUE/SOCIAL HOUR 10:00 AM
LUNCHEON 12:00 PM
FASHION SHOW 1:30 PM

DONATION \$85.00

For Tickets, call Salpi Mankerian
626-355-3789



ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ԸՆԾԱՅԱՐԱՆԸ ԿԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԷ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍԻՄՓՈԶԻՈՒՄ
(ARMENIAN SYMPOSIUM)

ՇՆՈՐՀԱԲՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՓՐՈՖ. ԴՈԿՏ. ԳԵՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆԻ
ԾՆՆԴԵԱՆ 80-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻ



Փրոֆ. Սեդա Պ. Տատոյեան կը դասախօսէ
Սուրբ Ներսէս Ընծայարանին մէջ

Գարնան կիսամեային ընթացքին՝ ամէն ամսուայ առաջին երկուշաբթին - Մարտ 2, Ապրիլ 6, Մայիս 4 - Հայկական Սիմփոզիումի (կամ Մտաւորական Կոչուէքի) օր է Սուրբ Ներսէս Ընծայարանին մէջ (150 Stratton Rd., New Rochelle, NY 10804, (914) 636-2003): Սիմփոզիումը կը սկսի երեկոցեան ժամը 7:00ին եւ կ'աւարտի ժամը 9:00ին: Սիմփոզիումի վարիչը եւ համադրողն է Փրոֆ. Սեդա Պ. Տատոյեան, որ դասախօսէ Ընծայարանին մէջ:

Բնականաբար, Հայկական Սիմփոզիումին լեզուն հայերէնն է իսկ նիւթերը՝ ամէն բան որ կը վերաբերի Հայ պատմութեան, մշակոյթին եւ ընկերութեան: Հիմնականին մէջ՝ Ընծայարանին ուսանողութեան հայ լեզուի եւ մշակոյթի դաստիարակութեան նպատակով ստեղծուած, նեղ ծրագրէ մը՝ Սիմփոզիումը վերածուեցաւ հանրային ձեռնարկի մը: Ուրեմն Սիմփոզիումը այսօր ընկերային գործունէութիւն մըն ալ է: Հրաւէր մըն է անիկա հաւաքուելու սեղանի մը շուրջ հոգեւոր եւ մարմնաւոր կերուխումի: Յունարէն symposium բառը, որ կը նշանակէ «միասին խմել», այս պարագային՝ կը նկարագրէ նաեւ հաւաքական Կոչուէք մը՝ ըմպելու հայ լեզուի, մշակոյթի եւ պատմութեան ակունքներէն:

Սուրբ Ներսէս Ընծայարանին Հայկական Սիմփոզիումը ակադեմիական ժողով մը չէ, այն ձեւով որ սիմփոզիում բառը կը գործածուի այսօր: Սակայն, անիկա անպաշտօն ձեւ մըն է ուսանելու ազատ եւ քննական ոճով մը եւ արտայայտուելու լաւ հայերէն լեզուով: Վիճաբանական եւ տիալեքիք (հարցում-պատասխանի)

միջոցով է որ պիտի ներկայացուին եւ քննարկուին բոլոր նիւթերը: Այս տեսակէտէն՝ Սուրբ Ներսէսի Հայկական Սիմփոզիումը տեսակ մը ֆորում է կամ բաց մշակութային ատեան մը, նոր բեմ մը, կամ «միջոց» մը (space) սորվելու ոչ միայն լեզուն այլ այն բոլորը զոր գիտակից հայր պէտք է որ գիտնայ իբրեւ իր ինքնութիւնը:

Պատմութիւնը, եկեղեցին, միջնադարեան եւ արդի մշակոյթը, արուեստները, հայկական համայնքները ամէն կողմ, եւ այլն, կը կազմեն Հայկական Սիմփոզիումին ծրագիրը: Այս գարնան առաջին չորս սիմփոզիումները պիտի կեդրոնանան հայոց պատմութեան վրայ: Միաժամանակ պիտի վերցուին մշակութային եւ ընկերային հարցեր իւրաքանչիւր շրջանի մէջ: Բոլոր պարագաներուն՝ շեշտը եւ խօսակցութիւնը կ'որոշուին ըստ մասնակցողներուն եւ հետաքրքրութեան եւ հարցումներուն: Ներկաները իրենց տրամադրութեան տակ պիտի ունենան անհրաժեշտ նիւթերը: Ընծայարանը, որ մեծ խանդավառութեամբ կը կազմակերպէ Հայկական Սիմփոզիումը, յուսով է որ հայ լեզուն եւ մշակոյթը հանրութեան եւս տրամադրելի ընելու իր ծրագիրը պիտի ծառայէ ոչ միայն համայնքին, այլ նաեւ զարգացնելու ազատ եւ արդիական մտեցումի նոր ուղղութիւն մը «հայկական հարցերու»: Հայկական Սիմփոզիումը նաեւ կը ձգտի հիմնել համակիրներ եւ եւ օժանդակ բարեկամներու շրջանակ մը, որ միասնաբար «խմէ» եւ «ճաշակէ» հոգեւոր եւ մարմնաւոր սնունդ, որոնց մշակումին եւ ուսուցման նուիրուած է Ընծայարանը:

Յարգելի պարոն Խրլոպեան,
Հայաստանի Հանրապետութեան Կինեմատոգրաֆիստների Միութիւնը եւ անձամբ եւ սրտանց շնորհաւորում ենք Ձեզ 80-ամեակի առթիւ:
Յանկանում ենք քաջ առողջութիւն, երջանկութիւն եւ նորանոր յաջողութիւններ Ձեր հայրենանուէր գործում:
Լաւագոյն մաղթանքներով,
ՀՀ Կինեմատոգրաֆիստների Միութեան նախագահ՝
Ռուբէն Գէորգեանց

ՄԵՄԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԳԵՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆ,
Հայ պահպանողականների անունից շնորհաւորում եմ Ձեզ՝ ծննդեան յօբելեանական տարեդարձի առթիւ, մաղթում եմ առողջութիւն, երկար կեանք եւ գիտական նոր նուաճումներ:
Բարեմաղթութեամբ՝ Միքայէլ Հայրապետեան
Երեւան

Փրոֆ. Գէորգ Խրլոպեան
Լոս Անձելըս
Յարգելի Փրոֆ. Խրլոպեան
Ձեր 80ամեակը թանկագին առիթ մըն է՝ անվերապահ հոգիով մեր գնահատանքը արտայայտելու ձեզի, յատկապէս հայագիտական ասպարէզին մէջ ձեր ունեցած ահագին վաստակի աւրնչութեամբ: Պատկառելի ծանօթ գիտնական մը՝ թէ՛ Հայրենիքէն ներս եւ թէ՛ Հայրենիքէն դուրս:
Հայ իմացական ու փիլիսոփայութեան աւրնչակից հրատարակութիւններ եւ գիտական անթիւ յօդուածներ լիովին կը վկայեն ձեր մտաւորական նուիրումի մասին՝ Հայ Գիրին, Մշակոյթին եւ իմացական ու գաղափարական շարժումներու պատմութեան:
Ձեր անհատական արժանիքները եւ կեանքի այս հարուստ հանդրուանին, անկեղծօրէն կ'ողջունենք ձեր 80ամեայ տարեդարձը, մաղթելով առողջութիւն եւ կորով, ինչպէս նաեւ կը յղենք գնահատական արժանի շնորհաւորութիւններ՝ աչքի առաջ ունենալով ձեր երկար վաստակը, ի նպաստ Հայ ժողովուրդի իմացական թէ՛ մշակութային դարաւոր պատմութեան:

Տէրը պահապան ըլլայ ձեզի եւ ձեր ընտանիքի անդամներուն:
Սիրով եւ Օրհնութեամբ՝
Յովնան Արք. Տէրտէրեան
Առաջնորդ

Սիրելի Գէորգ,
Ձերմայէս կը շնորհաւորեմ ծննդեանդ 80ամեակը: Կեանքդ եղաւ ամբողջ նուիրում ու ծառայութիւն ժողովուրդիդ ու հայրենիքիդ, ուր որ ալ գտնուեցար, քու ակադեմիական, գիտական, փիլիսոփայական եւ առհասարակ մտաւորական ներդրումներովդ:
Բարձրամակարդակ գործերդ, որոնց վերջին թափնեպսակը հայերու ցեղասպանութեան նուիրուած գիտական լուրջ հրատարակութիւնն է, պատիւ կը բերեն մեր ժողովուրդին ու հայագիտական աշխարհին:
Բեղուն վաստակիդ նորանոր յաջողութիւններ կը մաղթենք, առողջութեան եւ արեւշատութեան լաւագոյն ցանկութիւններով, սիրելի Անահիտին հոգատար ներկայութեամբ:
Պարոյր եւ Անի Աղպաշեան

Dear Dr. Kherlopian;
Greetings in the name of our Lord.H
On the occasion of your 80th birthday, we send you our hearty congratulations and sincere wishes for a long and healthy life.
Your service to our nation is immeasurable. And lately, your service to God's Kingdom has put you in the pedestal of honor.
We respect you as a teacher, historian, theologian and sociologist. There are few in our society who had achieved what you have achieved in your 80 years, even during the years when you were suffering physically.
We are sure that God will reward you for all you have done with love and dedication.
We ask God's abundant blessing on you and your lovely wife, Anahid.
Respectfully yours,
Mike and Arpi Youssefian

Advertisement for JANSEZIAN LAW FIRM, PC. The ad includes the text: 'If you're facing overwhelming debts, bankruptcy laws may eliminate all your debts permanently!', '225 South Lake Avenue, Third Floor, Pasadena, California 91101', and 'Call Now for a FREE Consultation: 626-432-7209'. It also features a portrait of Nazareth V. Jansezian, Esq. and the Armenian text 'ՏԵՄԷ՝ ԵՌԷ BANKRUPTCY-Ի ՕՐԵՆՔՆԵՐԸ ԿՕԳՆԵՆ ՁԵՁԻ, ՉԱՆԳԱՅԱՐԷՔ'.

ՀԱՅԱՍՏԱՆ ԼՈՅՍ ՏԵՍՆՈՂ «ՆԱԽԱՍԱՐԴ» ԹԵՐԹԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՆԱՀԱՅ ԳՐՈՂ ԵՒ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԱԲԵՏԻՍ ՆԱԶԱՐԵԱՆԻ ՀԵՏ

ՅԱՍՄԻԿ ԴԱՆԻԷԼԵԱՆ

Աշխատանքի ժամը դեռ չէր սկսվել, երբ Ալեքսիս Նազարեանը, իր գարմիկ Արթուրի հետ արդեն մեր խմբագրատանն էր: Առաջին անգամ լինելով հայրենիքում նա նպատակադրել էր իր գրած բանաստեղծությունները եւ յուշերը տպագրել թերթերում:

Մինչեւ մենք կը ծանօթանայինք գրություններին, պարզուց որ Ալեքսիս Նազարեանը լաւ գրող-ցակից է եւ հետաքրքիր պատմություններ պատմեց իրանահայ գաղութի առօրեայ կեանքի, հայ եւ պարսիկ ժողովուրդների բարեկամական փոխ-յարաբերությունների եւ աւանդական սովորոյթների մասին: Պարզուց որ իրանում գործող հայկական միությունները եւ կազմակերպությունները օգնում են միմեանց:

Բոլորի նպատակները համարեա նոցն են, ափիւնքում պահել հայոց լեզուն: Տեղական իշխանությունները որեւէ արգելք չեն հանդիսանում դպրոցական աշխատանքների պարագային, այլ ընդհակառակը, ամէն կերպ նիւթապէս եւ բարոյապէս օժանդակում են մեր դպրոցներին – պատմում է Ալեքսիս Նազարեանը: Մեր գաւակները դպրոցն աւարտելուց յետոյ, իրենց ուսումը շարունակում են թեհրանի եւ իրանի միւս քաղաքների համալսարանների տարբեր ճիւղերում, ինչպէս նաեւ Սպահանի եւ թեհրանի հայոց լեզուի եւ գրականության համալսարաններում: Հայերի թուի նուազման պատճառով փակուել են կրթական մի քանի հաստատություններ եւ դպրոցներ:

Այսօր իրանի հայ բնակչության թիւը զգալի նուազում է կրել: Ժամանակին իրանում ապրում էին երկու հարիւր հազար հայեր: Իսկ իմ ծննդավայր Քալալա գիւղում 1200 շունչից այսօր ոչ ոք չի մնացել եւ մեր գիւղը, միւս գիւղերի նման հայաթափուել է: Գիւղերը եւ քաղաքները պարպուում են հայութիւնից, բայց եկեղեցիները պահպանում են թեհրանահայ բնակչության կողմից, որոնք տարին մի քանի անգամ, տարբեր առիթներով այցելում են

գիւղերը եւ եկեղեցիներում տեղի են ունենում կրօնական արարողություններ: Ալեքսիս Նազարեանը շարունակում է պատմել – ես շատ երկրներում եմ եղել, բազմաթիւ եկեղեցիներ եմ այցելել, սակայն ոչ մի տեղ Քալալա գիւղի Ս. Յակոբ եկեղեցու գանգերի մաքրությունը եւ հնչեղությունը չեմ լսել: Իմ փափաքն է որ պատկան մարմիններին միջոցով կարողանամ այդ գանգերը փոխադրել Հայաստան եւ նուիրել Ս. Էջմիածնին, մի որեւէ եկեղեցում տեղադրելու համար: Ես բախտաւորում եմ 6 գաւակներով եւ 11 թոռներով: Շուրջ 30 տարի եղել եմ գիւղապետ: Հիմա երբ դատարկուել է մեր գիւղը հարեւանները պահպանում են եկեղեցին եւ իմ երկյարկանի բնակարանը: Ես իմ սեփական բնակարանի բանալիները յանձնել եմ պարսիկ հարեւանին: Երբ այցելում եմ գիւղ, պարսիկ հայրենակիցները շրջապատում են ինձ, հիւրասիրում եւ զրուցում ենք անցած քաղցր օրերի եւ հանգստակէտ առօրեայի մասին: Իսլամական լեղափոխությունից յետոյ երկրում արգիւտեց ոգելից խմբիչքների արտադրումը եւ օգտագործումը: Բազմահազար տակաւներով գինի եւ օղի պարպուեցին հորերի մէջ: Ես մեծ քանակութեամբ ընտիր գինիներ ունէի: Պարսիկ հարեւաններս օգնեցին ինձ, որպէսզի կարողանամ թագցնել դրանք: Պետութիւնը թոյլ է տուել քիրստոնեաներին օգտուելու ոգելից խմիչքներից: Շատերը զբաղուած են խմիչքների պատրաստումով, միայն ու միայն մոլսուլմաններին չվաճառելու պայմանով: Իրանահայութիւնը որպէս երկրի հաւատարիմ քաղաքացի, ազատ է ընդրելու իր պատգամաւորը խորհրդարանում, կատարելու կրօնական ծէսերը: Մկրտութիւն, նշանախօսութիւն, ամուսնութիւն, ապահարզան, թաղում, եւ ժառանգութեան բաշխում սրանք բոլորը կատարում են ըստ մեր եկեղեցու օրէնքների: Վերջում ծերունազարդ Ալեքսիս Նազարեանը խօսեց իր համեստ օգնությունների մասին, Հայաստանին եւ Արցախին: Բաժանուելուց առաջ նա հայրենիքին մաղթեց խաղաղութիւն, բարօրություն եւ համերաշխ ոգի:

ԱՐԻՉՈՆԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ՈՒՆԵՑԱԲ ՆԱԵՒ ԻՐ ՆՈՐԱՇԷՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Հայ Առաքելական Եկեղեցույ Արեւմտեան Թեմը տարիներէ ի վեր կ'ընդլայնի, կը կազմակերպուի ու կը բարգաւաճի: Հին համայնքներու վրայ կ'աւելնան նորեր եւ կը կառուցուին նոր եկեղեցիներ: Կառուցողական կամ շինարարական այս ընդհանուր շարժումին մաս կը կազմէ նաեւ Արիզոնայի նորաշէն Սբ. Աբգար Եկեղեցին:

Արեւմտեան Թեմին իրաւասութեան տակ գտնուող Արիզոնայի հայութիւնը 1957 թուականին ունեցած է իր առաջին հաւաքը, որմէ ետք հետզհետէ սկսած է կազմակերպուիլ եւ կերպարանք ստանալ: Սակայն, համաձայն շատ հին յօդուածի մը վկայութեան, 1800ական թուականներուն արդէն կը յիշուին Հայեր, որոնք բնակած են Valley of the Son կոչուած շրջանին մէջ: Բայց 20րդ դարու սկիզբն է որ այդ տարածաշրջանին մէջ Հայ հասարակութիւնը սկսած է ներկայութիւն դառնալ:

Առաջին եկեղեցականը, որ պաշտօնական այցելութիւն տուած է Արիզոնայի համայնքին՝ եղած է այսօրուան Երուսաղէմի Սրբազան Պատրիարք՝ Գեղըն. Թորոս Արք. Մանուկեանը: Այդ առիթով, ան պատարագած է Յովսէփեան ընտանիքի բնակարանին մէջ՝ 1963 թուականին: Նոյն տարուան Հոկտեմբերին, Արիզոնայի Նահանգը օրինաւորապէս ճանչցած է Հայ Առաքելական Եկեղեցին եւ անոր աշխատանքը:

Անկէ ետք, Յովսէփեան ընտանիքը իշխանական նուիրատու-

թեամբ շնորհած է ներկայ կալուածը, որուն վրայ, բացի սրահէն (Մելիքեաններու նուէր), գրասենեակներէն, ժողովարանէն, դասարաններէն (Ալեք եւ Մարի Մանուկեաններու անունով), Գրադարանէն (Նիքիթ եւ Էլիանոր Օրջանեաններու անունով), այսօր արդէն աւարտելու վրայ է Սբ. Աբգար կոչուած սեփական ու նորաշէն գեղեցիկ եկեղեցին, ծառայելու համար Հայ Համայնքին հոգեւոր, եկեղեցական, ինչպէս նաեւ կրօնական դաստիարակութեան եւ ազգային ու մշակութային նպատակներուն:

Նորաշէն եկեղեցույ Սբ. Սեղանի օծումը նախատեսուած է որ կատարէ ազգիս վեհափառ Հայրապետ՝ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իսկ Եկեղեցույ օծման արարողութիւնը պիտի կատարէ Թեմիս Սրբազան Բարեջան Առաջնորդ՝ Յովնան Արք. Տէրտէրեան: Թուականները պիտի յայտարարուին ատենին:

Մեր եկեղեցիները կը կանգնին հոյակապ, որովհետեւ անոնք կը ծծեն երկիրը ընթացող հոգեղէնին հարստութիւնը եւ անոր նշանակութիւնը:

Իսկ մեր ժողովուրդը պէտք է ունի այդ հոգեղէնին՝ որպէսզի ապրի: Եւ Հայ Առաքելական Եկեղեցույ Արեւմտեան Թեմի եկեղեցական թէ աշխարհական ղեկավարները լուրջ ծրագրներով կ'աշխատին այդ հոգեղէնը հասցնելու մեր ժողովուրդին:



ՀԱՅՐԱՌՉԷ

Կապուկնոգոսթիւմ 2 արարով
Հեղինակ՝ ՌԷՅ ԳՈՒՆԻ
Բեմադրիչ՝ ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ

ԿԻՐԱԿԻ, ՓԵՏՐՈՒՍՊ 15 - ԿԱԼԷԱ - ԺԱՄԸ 5:00-իւ, \$50

Շաբաթ, Փետրուար 7, 21, 28 - Ժամը 8:00-իւ
Կիրակի, Փետրուար 8, 22, - Ժամը 6:00-իւ
Շաբաթ, Մարտ 7, 14 - Ժամը 8:00-իւ
Կիրակի, Մարտ 1, 8, 15 - Ժամը 6:00-իւ

ՄՈՒՏԱԻՆ ՆՈՒԵՐ \$20
Հ.Բ.Ը.Մ. Մամուկեան Կեդրոնի Մշակութային Համալիր
2495 E. Mountain Street, Pasadena

Տոմարը կայուն է պատմապ
• Հ.Բ.Ը.Մ. Գրասենեակ 626-794-7942
• Ապրիլ Գրատուն 818-243-4112 • Պեքն Գրատուն 818-244-3830
• Հ.Բ.Ը.Մ. Մամուկեան-Տեմիրեան Վարժարան 818-883-2428

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 for USA
* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel :----- Fax : -----

ԲԱՅ ՆԱՄԱԿ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ

Շարունակում է 13-ԷՋ

խագահը, մինչ հիմա, ինչպես չըմբռնեցիք, որ հնարաւոր չէ, այդ տեսակի ժողովրդին կերակրել յօրինուած ստերով ու կեղծիքներով:

Իրենց մօր մեղքերի համար, ապագայում, ձեր գաւակներն ու թոռները, պէտք է պատասխան տան իրենց հայրերի ու պապերի արարքների համար:

Այն, լաւագոյն տղաները, որոնց փակել էք բանտերում, վատահոգ, նրանք բոլորովին էլ ձեր թշնամիները չեն: Թշնամիները ձեր շուրջն են, «արքունիքում»:

Առաջինը հենց Քոչարեանն է, որից յետոյ գալիս են բազմազոյն շողորթները... բոլոր նրանք, որոնք պատկանում են անտղանաշարաւորների ընտանիքին, սկսած Ար. Բարդասարեանով, ... վերջացրած, իսկ դրանք էլ այնքան շատ են, որ անհնար է բոլորին թուարկել: Յիշէք, դրանք առաջինն են փախչելու, թողնելով ձեզ միայնակ, «խորտակուող նաւի վրայ», իսկ եթէ այդ նոյն «նաւի» վրայ միաժամանակ գտնուէին նաեւ բանտերի այն ազնուագոյն, անձնագործ տղաները, համոզուած եղէք, նրանք էին մնալու ձեր կողքին, փրկելու ձեզ, փրկելու ոչ նրա համար, որ դուք Սերժ Սարգսեանն էք ու մինչեւ անգամ նրանց պատանդողը, միեւնոյնն է, նրանք ձեզ փրկելու էին, որովհետեւ նրանց հուժկուն է այդպիսին: Այդպիսին եղան Արցախեան պատերազմում, այդպիսին կան եւ այդպիսին էլ մնալու են:

Ահա թէ ինչի համար, շատերը չգիտեն, թէ ովքեր են հայրենիքի համար արիւն տուողները եւ ովքեր քամողները...

Եւ քանի դեռ սեւը ներկայացուում է սպիտակի դիմակով, իսկ առանց այդ սպիտակների էլ, որոնք ցաւօք սեւացուում են գիշեր ու զօր, հայրենիքը կը դադարի գոյութիւն ունենալուց:

Քոչարեանը ձեզ ժառանգել է ոչ միայն պղծուած, արեան մէջ ողորուած մի աթոռ, այլ նաեւ կողոպտուած մի հանրապետութիւն, որը վեր է ածել մի «կորստացիա», եւ այդ «ընկերութեան», անդամների հետ երկրի հարստութիւնը բաժան-բաժան էք արել միմեանց միջեւ, իսկ կողոպտուած ժողովրդին էլ հասցնելով ծայրահեղ աղքատութեան, ենթարկելով նրանց հակաօրինական, անարդարաւոր հալածանքների ու բռնութիւնների, ծառայեցնում էք ի շահ ձեզ եւ ձեր «ընկերութեան»:

Ամենայն հայոց Հայրապետը, տարեմուտի իր ուղերձում, խօսեց արդար վաստակի մասին: Նա ո՞ւմ նկատի ունէր, առաջ քաշելով այդ միտքը: Արդեօք, կարող է՞ք տալ այդ խրթին հարցի պատասխանը...

Ճշմարտութիւնը, ինչքան էլ ծանր է ու դժան, այնքան արժէքաւոր եւ ընդունելի, մաքրուելու, փրկելու մեղաւոր հոգիները Աստուծոյ եւ իմաստուն ժողովրդի դատաստանից: Եւ դրանից ազատուելու միակ միջոցն ու երաշխիքը դա ձեզ համար ճակատագրական դարձած աթոռից հրաժարուելն է, որը կը փրկի ձեզ ոչ միայն վերջնական կործանումից, այլ նաեւ երկիրը, որը յայտնուել է անդունդի եզրին, հետզհետէ դուրս կը գալ սոցիալ-տնտեսական ճգնաժամից եւ ներքաղաքական խիստ սրուած միջոցառումից:

Միաժամանակ կ'ազատուէք արտաքին ուժերի հանդէպ վեր խոյա-

ցած ձեր այն պարտաւորութիւններից ու պարտադրանքներից, վերաբերող Արցախի հիմնախնդրին:

Վերջ կը դրուի նաեւ Հայաստան-Թուրքիա ծանր, կոնֆուտ եւ վտանգաւոր յարաբերութիւններին:

Շահարկելով թուրքիայի հետ այսպէս ասած «բարեկամութեան» հարցը, չգիտեմ, դուք ի՞նչպէս էք պատկերացնում այն: Հազարամեակների դառը պատմութիւնը հաստատել է, որ թուրքը երբեք ոչ մէկի բարեկամը լինել չի կարող, կամ էլ բարի դրացին: Այնպէս, որ լաւ կը լինէր չմոռանալիք հետեւեալ ճշմարտութիւնը՝ թուրքը միշտ մնում է թուրք:

Եւ եթէ մտադրուած էք Հայաստանի դռները բացել նրանց առջեւ «ի բարօրութիւն հայ ժողովրդի» չարաչար սխալում էք եւ մի փորձէք մոլորութեան մէջ գցել որոշ միամիտներին: Դա միայն ձեր «Պայծառաստեութեան» արդիւնքն է: Ոչ մի անհատ, անկախ իր պաշտօնից ու դիրքից իրաւունք չունի ինքնուրոյն նման որոշումներ կայացնել:

Լաւ իմացէք եւ գիտակցէք, այդ խելայեղ քայլերի հետեւանքով, հայ ժողովուրդը, եթէ ոչ այսօր, ապա մի քանի տասնամեակ յետոյ վերջնականապէս կուլ է գնալու այդ արիւնարբու քոչուորներին:

Եւ մի օր էլ կը պարզուի, որ հայերը, իրենց մի թիւղ հողի վրայ յայտնուել են փոքրամասնութիւն կարգավիճակում: Այն ժամանակ ոչ ես կը լինեմ, ոչ դուք եւ ոչ էլ այդ կարճամիտ «դիւանագէտ» էդ. Նալբանդեանը: Հայաստանը հազիւ մաքրուել է օտարականների պէս բազմազոյն ազգերից: Նման պրոբլեմ է առաջացել պարսիկ ազգերին հետ նոյնպէս: Ի՞նչ է դա աղէտ չէ: Թուրքերը մտնելու են ապականելու են,, մեզ ժառանգութիւն մնացած, այս մի պտղունց սուրբ հողը: Նրանք կը գան, կը գնեն ամէն ինչ, կը տանեն կնութեան, անառակութեան մեր հարազատ աղջիկներին: Մնացածը թողնում եմ ձեր սառը դատողութեանը, եթէ այն ինչ որ չափով պահպանուել է:

Բաց նամակիս բովանդակութիւնից, կարծում եմ կուհեցիք, որ չխորացայ այն մանրամասներում, որոնք կապուած են ձեր եւ «ընկերներից» անձնական ներքին գործերին... բայց դա, ոչ թէ չիմանալու արդիւնք է, այլ լուր տարրական մարդկային գործօն...

Հարկ չկայ ամէն ինչ հանել ջրի երես:

Դուք էք եւ ձեր խիղճը, եթէ այն կայ, ուրեմն ինքներդ էլ որոշէք, թէ երբ էք կանգ առնելու...

Փորձեցի հնարաւորինս լինել անկեղծ, միաժամանակ չթաքցնելով յուզումներս եւ գայրոյթս որոշ խիստ կարեւոր հարցերի շուրջ եւ ի հարկէ բարիացակամութիւնս նոյնպէս:

Առաջ քաշած հարցերի եւ ցաւոտ պրոբլեմների շրջանակում, չկայ ոչ մի միտում եւ յօրինուած կշտամբանքներ:

Եւ վերջում, որպէսզի մենք չյուսալքուենք, մտածենք նոյն ձեւով, միաժամանակ մնալով սթափ եւ լաւատես, չիշենք մեր պայծառ, իմաստուն Տիտանների բարի խօսքերը՝ դրանք շատ եւ շատ են, մեծագոյն արժէքներ եւ ուղեցոյց բոլորիս համար:

Նամակս աւարտում եմ նորից չիշելով մեծ հայի եւ քաջարի գաւակի՝ Չօրավար Անդրանիկի իմաստուն խօսքերը:

«Մենք այսօր կանք, վաղը չկանք,

ԿԻԿՏՈՐ ԳԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Շարունակում է 8-ԷՋ

պատուակալ անդամ, 10 համալսարաններու պատուակալ դոկտոր, 30-է աւելի շքանշաններ որոնք կը պարունակեն տասնեակ մը ոսկէ մետալներ Սովետ Միութեան, ԱՄՆ-ի, Անգլիոյ, Ֆրանսայի, Գերմանիոյ, Չեխոսլովաքիոյ, Պուլկարիոյ, Աւստրալիոյ, Լեհաստանի, Արժանթինի եւ Հունգարիոյ պետական ու գիտական մրցանակներէ: Անկախութենէն ետք, նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի ձեռքով 1994ին ստացաւ հանրապետութեան բարձրագոյն՝ Հայաստանի ազգային հերոսի կոչումը:

Եզրակացնելով, Սեդա Հայկընդոնք Վիկտոր Համբարձումեանի յայտնագործութիւններուն միջազգային տարողութիւնը: Սովետ Միութեան - եւ Հայաստանի - աստղաբանագիտութեան անվիճելի ուսանողը, յառաջապահն ու առաջնորդը կոչեց զինք:

Երեկոյի գլխաւոր դասախօսն էր գրող եւ ճարտարագէտ Սահակ Թուրճեան: Վիկտոր Համբարձումեանի մասին իր տուած շահեկան գեկոյցը պիտի տանք մեր յաջորդ թիւով:

Օրուան հանդիսավարը՝ Յարութ Տէր Դաւիթեան եզրափակիչ իր ելոյթով, ներկայացուց Վիկտոր Համբարձումեանի գիտական, մարդկային եւ ազգային աւանդը: Աստղաբանագիտական բացառիկ նուաճումներուն առընթեր, ան ծանրացաւ մտածողի եւ հայրենասէրի անբասիր կերպարին վրայ:

Լայն ընդգրկում ունի իր մտահորիզոնը, ըսաւ ան: Ամբողջական գիտնական է Համբարձումեանը՝ քննարկած ինդիւրներու լուծման ձգտող սեփական անկախ, իւրայատուկ մօտեցումի խիզախութեամբ, բայց միաժամանակ փորձագիտական հմտութեան ընձեռած տոկոն բանականութեամբ: Ան կ'անդրադառնայ թէ, Կալիլէոյի կամ Նիւթընի դասական մեքենաբանութենէն ետք, կ'ապրինք աստղագիտական խոշորագոյն յայտնագործութիւններու դարաշրջան մը, երբ երեւան կ'ելլեն սկզբունքօրէն նոր երեւոյթներ, եւ աստղագիտութիւնը կը դառնայ բնագիտութեան արմատական վերափոխութիւններու աղբիւրը: Ան կը ջատագովէ հետազօտել Այնշիթայի ձգողականութեան ընդհանուր տեսութեան տեսական լուծումները եւս, սա-

կայն նոյն ատեն զանոնք համեմատել Տիեզերքի դիտարկուող մասի իրական յատկութիւններուն հետ: Պէտք է խուսափիլ այդ տեսութեան բուրբ գոհակացումներէն ու կոպիտ արտարկումներէն (extrapolations) հաւասարապէս, կը շեշտէ ան, քանի թոյլատրելի չէ ամէն ինչ բացատրել մաթեմատիկական ձեւակերպումներու միջոցով, երեւոյթները կտրել բնագիտութենէն, եւ ամլացնել տուեալ առարկայի գիտական ճշմարիտ հետազօտութիւնը:

Միջազգային աստղագիտական միութեան հոլանտացի նախագահը Եան Օօրթ կը գրէ. «Սովետ Միութեան գիտնականներու առաւել կարեւոր ներդրումը աստղագիտութեան մէջ՝ Վիկտոր Համբարձումեանի հետազօտութեանց արդիւնքներն են կաթնածիրերու կորիզներուն եւ անոնց բնաշրջումին վերաբերեալ: Նոյնքան կարեւոր են իր գաղափարները աստղափիւռներու մէջ աստղերու ծագման մասին: Այդ բաւական ինքնատիպ վարկածը յետագային լիովին հաստատուեցաւ գիտնականներով»:

Համբարձումեան խստապանջ էր իր անձին եւ գործընկերներուն հանդէպ: Աշխատասէր էր: Կը խորշէր ծանծաղամտութենէ: Բարձր կը գնահատէր խելացի ընդդիմախօսը: Միայն արհամարհանք ունէր պատեհապաշտներու եւ կեղծ գիտնականներու հանդէպ: Անհրաժեշտութեան պահերուն գիտցաւ արտայայտել իր խիզախութիւնը:

Յարգեց հայրենիքը, սիրեց իր ժողովուրդը եւ հայ լեզուն: Հայաստանի գիտութիւններու ակադեմիայի պաշտօնական լեզուն հռչակեց հայերէնը: Հայոց ցեղապանութիւնը դատապարտող յօդուածով առաջինը արտայայտուեցաւ «Բրաւտա» թերթին մէջ: Յեղապանութեան յիմնականի յուշահանդէսին միակ բանախօսն էր Օփերայի դահլիճին մէջ: Եւ հացադուլի դիմեց Արցախի անկախութեան ի նպաստ:

Յարութ Տէր Դաւիթեան իր գեկուցումը աւարտեց՝ մէջբերումներ ընելով քաներորդ դարու հայ իմացական մեծագոյն հանճարի «Կտակ»էն, ուր ան գալիք սերունդներուն աւանդ կը ձգէր իր լուսաւոր միտքի հօր գաղափարները - որոնցմէ ամենաթանկը կը նկատէր հայոց լեզուն:

Ի սէր Աստուծոյ, այնպէս ըրէք, որ յետագայում սերունդը մեզ օրհնէ եւ ոչ թէ անիծէ»:

գալի ակնկալիքներով՝
ԳՈՒՐԳԷՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Գեղանկարիչ,
կինեմատոգրաֆիստ



Merrill Lynch
INVESTMENT BANKING

JACK KALANJIAN
Professional Financial Advisor

Corporate Center Pasadena
225 So. Lake Avenue
Pasadena, CA 91101
(626) 396-2825 Direct
(626) 376-4665 Fax
jack_kalanjian@ml.com

“Helping the Armenian Community Build Wealth”

ԴԵՂԱԳԻՐ ՔԱՂՑԿԵՂԵՆ ՋԵՐԾ ՄՆԱԼՈՒ

Ամեն օր կենսասնիք գործածեցեք

Ֆոլիք ասիտ պարունակող կենսասնիքի դեղահատերը ձեզ կը պաշտպանեն քաղցկեղէն եւ սրտի հիւանդութիւններէ:

Թեփ պարունակող արտադրութիւնները ձեզ կը պաշտպանեն քաղցկեղէն

Եթէ շաբաթը չորս անգամ սպառէք թեփ պարունակող հաց, դժմամ կամ կեղեւով բրինձ, քաղցկեղի հիւանդութենէ գերծ կը մնաք:

Բանջարեղէն եւ պտուղ օգտագործեցեք

Բանջարեղէն եւ պտուղ, մասնաւորաբար լոլիկ, կարմիր խաղող, եւ պրոքոլի սպառողներ, սրտի տազնապէն, քաղցկեղէն, նաեւ շաքարախտէ գերծ կը մնան:

Տեսք ֆուտէ հրաժարեցեք

Համպրերը, տապկուած գետնախինձոր եւ նման ուտելիքներ սպառելէ առաջ չիշեցէք որ սրտի հիւանդութիւնները մէկ երրորդ համեմատութեամբ այս ուտելիքներէն ծնունդ կ'առնեն:

Ձուկ թող գտնուի ձեր սեղանին վրայ

Կը գորանայ ձեր ախտագերծման դրութիւնը, եթէ կանոնաւոր կերպով ձուկ սպառէք:

Աղի գործածութիւնը նուազագոյնի իջեցուցեք

Աղի չափազանց համեմատութեամբ գործածութիւնը կաթուածի եւ սրտի հիւանդութիւններու հրաւիրագիր կը պատրաստէ:

Թէյ խմեցեք

Կանանչ թէյն ու թէյի բնականոն չափով գործածութիւնը դրական ազդեցութիւն կը գործէ քաղցկեղի հիւանդութեան վրայ:

Ուշադրութիւն յաւելեալ փաուստերու

Կատարուած նոր պրպտումի մը համաձայն, գէր մարդոց կողմէ առնուած իւրաքանչիւր նոր փաուստ, անոնց կեանքէն կը կրճատէ 20 շաբաթ:

Մի մոռնաք սելենիումը

Սելենիումը քաղցկեղի դէմ բնական պահպանողական նիւթ է: Առատ քանակութեամբ կը գտնուի կաղինի, պիստակի, ձուկի եւ արմատիքներու մէջ: Ամէն օր սելենիում գործածողներու մօտ քաղցկեղի հաւանականութիւնը լուրջ համեմատութեամբ կը նուազի:

Սիկառի գործածութիւնը արգիլուած է

Սիկառի գործածութեան սովորաւորութենէն հրաժարիլը դիւրին է այլեւս մեր օրերուն: Պէտք է դիւրին ճամբայ մը գտնել այս մոլութենէն ձերբազատելու համար:

Ձուր խմեցեք

Աղիքի քաղցկեղէն գերծ մնալու հաւանականութիւնը կիսովին կը նուազի, եթէ ենթական օրական հինգ գաւաթ ջուր խմէ:

Պահպանեցեք ձեր մորթը

Մի մոռնաք որ եթէ երկար ատեն արեւու ճառագայթներու ազդեցութեան տակ մնաք, քաղցկեղի հիւանդութեան ենթակայ կը դառնաք:

ՕՊԱՄԱՅԻ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 6-էն

զաւակները դպրոց դրկելու, անհրաժեշտ ծախսերը հոգալու, եւ այլն:

Ահաւասիկ ուրեմն այս երկրի ներկայ կացութիւնը: Տնտեսական տագնապ մը, «Recession» որ ամենակարեւորը կը թուի տեսնել, 25 տարիներէ ամենէն ծանր անգործութիւնը, պանքաներու ջլատումը, ինքնաշարժերու արտադրութեան կասեցումը, եւ նման հարցերը, որոնք նկարագրուեցան եւ իր առաջարկած լուծումները, վերոյիշեալ հարցերու վրայ, կոծղային բջիջներու վերաբերեալ Պուշի իշխանութեան դրած արգելքի վերացումը, եւ իր ֆինանսական լուծումներու առաջարկութիւնները, յատկապէս հանրապետական շրջանակներու կողմէ, Օպամայի հասցէին չպրտեցին ընկերավարութեան, սոցիալիզմի ամբաստանու-

թիւնն ու մեղադրանքը: Նաեւ իր անձին վերագրուող «միապետական» կարգադրութիւնները անհանգիստ ըրած են Ամերիկայի աջակողմեան շրջանակներ, զինք նոյնիսկ նմանցնելով Լենինի, կամ Քարլ Մարքսի հետեւողներուն: Ըստ երեւոյթին, իր հոգն ալ չի թուիր ըլլալ այս բոլորը, եւ ինք կը յայտարարէ որ ամերիկացի ժողովուրդին վստահութիւնը ունի ինք: Արդարեւ անցեալ շաբթուայ հանրային կարծիքի մօտ եղած քուէախոյզը ցոյց կու տար որ Պարաք Օպամա կը վայելէ ժողովուրդին 72 առ հարիւր տոկոսին վստահութիւնը, բան մը որ քիչ ձեռք կը բերուի նոր իշխանութեան մը առաջին քանի մը շաբաթներու ընթացքին: Պէտք է սպասել եւ տեսնել թէ ինչ պիտի ըլլան այս բոլորին արդիւնքները տարի մը, երկու տարի, կամ չորս տարիներ ետք...

ՆՈՅ ՆԱՇԱՊԵՏԻ ՎԵՐԱԴԱՐՁ

Շարունակուած էջ 7-էն

հաւաքականութիւնն է, ժողովուրդն է: Ժողովուրդին մաս կազմող իւրաքանչիւր մարդու կեանքն ու ճակատագիրը շատ աւելի թանկագին են քան այն ամօթալի գինը որով զինք վաճառքի հանած են դրամատիրական բարոյագուրկ շուկային վրայ: Ես տարակոյս չունիմ թէ ամբողջ Տիեզերքի յառաջացեալ զարգացման հասած կենսատեսակներու հասարակութիւնները կ'ապրին էսպէս ընկերավարական տարատեսակ իրաւակարգերու մէջ: Եթէ այդպէս եղած չըլլար, ամբողջ հասարակութեան կառուցը կարճ ժամանակէն պիտի քայքայուէր, ինչպէս Երկրի վրայ՝ բնութեան եւ իր բարիքներու բռնաբարմամբ կորցուած նիւթական շատ կարճատեւ շահարկումէ ետք:

դուն որ արարատեան դաշտի առաջին սերմնացանն էս – եւ, խօսքը մէջընդմիջ, հայկական կարմիր խաղողի աննման գինիով առաջին գինովցողը – Ի՞նչ տրամաբանութեամբ դատելու եկած էս քեզմէ սերած այսօրուայ մարդկային թերի հունձքը: Հիմա արդէն, հայոց աշխարհի արիւնաքամուած ժողովուրդի հրէշատիպ նոր կեղեքիչները, ազատութեան եւ անկախութեան իւրովի սնամէջ լոգունգներով դժոխքի վերածեր են մարդոց կեանքերը: Այս աւազակապետերը կողոպտելու ելած են անոնց վրայի շապիկն իսկ՝ շուկայական յարաբերութեան եւ անբարոյութեան համակարգի մը անբանասցոյցի թմբկահարումով: Իսկ դուն, նահապետ, եկած էս ահա երկրորդ ջրեհեղեղով մը սպառնալու համար մեզի: Գովելի կամ պախարակի ինչ ալ կ'ընենք մենք մարդերս՝ ի սկզբանէ ժառանգաբանօրէն նախածրագրուածն է մեր ծիններուն (12) խորերը: Ուրեմն այս ի՞նչ քմահաճ դատաստան է, ի՞նչ կարգի դատողութիւն, երբ նոյնիսկ սերմնացանը դատաւոր դառնալով կը սպառնայ ոչնչացնել ի՛ր իսկ հունձքը:

(Շարունակելի 3)

- 10. Լուսատարի - Այն հեռաւորութիւնը որ լոյսը, երկվայրկեանը 300,000 ԲՄ արագութեամբ, կը կտրէ մէկ տարուայ մէջ (365x24x60x60x300,000 Բիլմմեթր):
- 11. Յատկորոշիչ - Specification
- 12. Ծիւն - Սերմնաբջիջներու մէջ գտնուող այն տարրը կամ միւրք որ կ'որոշէ ու կը հակակշռէ ժառանգական յատկութիւնները եւ անոնց փոխանցումը - Gene

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԳ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՅԸ

CHARTER CABLE 280-ՐԳ ԿԱՅԱՆ
 (ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԵՐՊԵՆՔ, ԼԱ ՔՐԵՍԵՆԹԱ)
 GLOBACAST SATELLITE
 ՀԻՆԳՇԱՐԹԻ ԵՐԵՎԱՆԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

ՔԱՉ ՆԱԶԱՐ
ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան
 Ժամը 10:00-ից 12:30
 Կլէնտէյլի 280-րդ կայանից

GENERAL CONTRACTOR
BID REQUEST

Qualified Consulting firms are invited to submit combined Statements of Qualifications and Proposals by 5:00 PM, April 1, 2009 for Project Number E09-07, Construction Management and Materials Testing to assist the Authority in two projects. These projects will be financed using a combination of Airport and federal funds. The projects are the Taxiway C, D and G Reconstruction and Runway Guard Lights installation. Disadvantage Business Enterprise participation is strongly encouraged. A Request for Qualifications/Proposal package can be obtained directly from the Bob Hope Airport Web site at bobhopeairport.com under Business Opportunities. All Proposers shall register with the Airport Engineering Department either via web site or in person. Proposals submitted by firms who have not registered with Airport Engineering will be considered non-responsive.

ՄԱՐԱԶԴ



ՍՈՆԱ ՊԱՒԱՆԻԱՆ
(1952-2009)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրելի կնոջ, մօր, զաւակին, քրօջ, եւ ազգականին՝ հանգուցեալ ՍՈՆԱ ՊԱՒԱՆԻԱՆ-ի մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 7 Մարտ 2009-ին, Պոսթոնի Massachusetts General Hospital-ի մէջ, չես երկարատեւ անողօք հիւանդութեան:

- Սգակիրներ՝
 Տիար Մարտիկ Պալանեան եւ զաւակները՝ Ժիրայր եւ Մարալ,
 Տիկին Զարուհի Զօրայեան,
 Տիկին Անուշ Պալանեան,
 Տէր եւ Տիկին Ժիրայր եւ Մարիզ Զօրայեան (Գանատա),
 Տէր եւ Տիկին Հայկ եւ Այտա Նազաշեան եւ զաւակները՝ Ալին
 եւ Արէն,
 Տոբթ. եւ Տիկին Տիգրան եւ Պարպարա Զօրայեան (Ֆրանսա),
 Տէր եւ Տիկին Թադևոս եւ Սաթօ Արապեան եւ զաւակները՝ Ռաֆֆի
 եւ Անի,
 Տէր եւ Տիկին Վահէ եւ Հերմինէ Վարժապետեան եւ զաւակը՝
 Արմէն,
 Տէր եւ Տիկին Մայքըլ եւ Մէլանի Զօրայեան եւ զաւակները
 (Գանատա),
 Տէր եւ Տիկին Թօմ եւ Գարօլին Տրամպալաս եւ զաւակները
 (Գանատա),
 Տէր եւ Տիկին Աշոտ եւ Աննա Նազաշեան եւ զաւակները՝ Արեգ
 եւ Անի (Հայաստան),
 Տէր եւ Տիկին Կարօ եւ Հանատի Վապժապետեան եւ զաւակը՝ Ալեգ,
 եւ համայն Զօրայեան, Պալանեան, Վարժապետեան եւ Ճրոճընեան
 ընտանիքները:

Յուզարկաւորութեան տխուր արարողութիւնը տեղի պիտի ունենայ,
Ուրբաթ 13 Մարտ 2009-ին, ժամը 2.00-ին, Գահիրէի Ս. Գրիգոր
Լուսաւորիչ եկեղեցու մէջ

ՍԵՐ ԵՒ ՅԱՐԳԱՆՔ, ՆԱԵՒ՝ ՓՈՒՆՁ ՍԸ ԾԱՂԻԿ ՍԵՐ ԿԱՆԱՆՑ

Շարունակուած էջ 1-էն

դո՛ւրեւ գործընթացը, եւ այլն:
 1910-ին, Գորէնհակընի մէջ
 գումարաւած Միջազգային Կա-
 նանց Համագումարը, մի անգամ
 ընդմիջտ հաստատանց «Կանանց
 Միջազգային Օր»ը, որ շուտով լայն
 տարածում արձանագրեց աշխար-
 հով մէկ:

Այսօր, Կանանց միջազգային
 շարժումը, հպարտութեամբ կր դի-
 մաւորէ տասնամեակներու վրայ
 ծաւալած իր արդարակորով պայ-
 քարի արժանի հատուցումը հան-
 դիսացող ձեռքբերումները, որոնք
 ազատագրեցին կանանց՝ մարդկա-
 յին ընկերութեան դարաւոր կա-
 պանքներէն, խորական դրոյթներէն
 եւ մշտապէս անտեսուածի տխուր
 կարգավիճակէն, զանոնք բերելով
 արանց հետ հաւասարութեան մա-
 կարդակին: Կինն այսօր, ինչպէս
 միշտ, ընտանիքին նուիրեալ էակ է:
 Անսպառ եւ մշտապէս գոհողու-
 րեան կենսատու աղբիւրն է: Ըն-
 տանեկան եւ ազգային ժողովուրդ-
 քիւններու, առաջինի եւ քաջակո-
 րով պաշտպանն է: Արդար, անյի-
 շաչար եւ վարակիչ սիրոյ, սրտի
 անդադում քարախումբն է: Մար-
 դասիրական եւ մարդապաշտպան
 պայքարի նաւապարհին իր արձա-
 նագրած յաղթանակներուն, իր
 կեանքով պաշտպան դիւցազնու-
 հին է: Կանայք, իրենց մայրական
 նուիրական առաքինութիւններու
 շարքին, բերին իրենց անզնա-
 տելի նպաստը մարդկութեան քա-
 դախարական վերելքին նաեւ:
 Անոնք, իրենց արժանաւոր տեղը
 գրանցեցին ժողովուրդներու ազգա-
 յին, ընկերային, քաղաքական, ազա-
 տագրական, գիտական, կրթական,
 մշակութային եւ գեղարուեստա-
 կան յեղաշրջական պատուանդան-
 աներուն վրայ: Որովհետեւ, անոնք
 հաւատացին կամքի ուժին: Յարա-
 տել աշխատանքի ամբողջական կա-
 բելութիւններուն: Աննկուն նկա-
 րագրի ձեռքբերումներուն: Սիրոյ
 հրաշքին եւ Հաւաքական աշխա-
 տանքի բարեշրջող կենսուժին:

Մարդիկ, ժողովուրդներ,
 իրենց տատկաներն ու մայրերը, հոյ-
 բերն ու բարեկամուհիները ողջու-
 նելու, ազգ. ազգ տարբերոյատուկ
 սովորութիւններ կը դրսեւորեն
 ամէն տարի, Մարտ 8-ին, «Միջազ-
 գային Կանանց Օր»ու փառաւոր
 առիթով: Կան՝ կը նուիրեն, ծաղիկ-
 ներ, կան՝ կ'ընծայեն նուէրներ, շա-
 տեր՝ նաշարաններ կը տանին:
 «Միջազգային Կանանց
 Օր»ու ան այս տօնական օրերուն,
 մենք, մեր այս անկիւնէն ներս հիւ-
 սած սրտի խօսքը կ'ընծայաբերենք,
 մեր հայ մայրերուն, հոյբերուն եւ
 հարագատներուն, աշխարհով մէկ
 ցրուած օտարազգի բոլոր մայրե-
 րուն, հոյբերուն, եւ տակաւին հո-
 գածութեան պակասէն տագնապող
 բերան երկիրներու անիրաւուած
 կանանց, մաղթելով բոլորին քա-
 ջառողջութիւն, արեւշատութիւն եւ
 երջանկութիւն:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ... ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ...
Կլէնտէլի AMGA 280-րդ Ալիքը
Այժմ Կը Սփռուի
GlobeCast
Արբանեակային Հեռատեսիլով
Ամերիկայի, Գանատայի եւ Մեքսիկոյի
Ամբողջ Տարածքները
Մանրամասնութիւններու Համար
Հեռաձայնել 818.547.9696

ԲԱՑՈՒԱԾ Է
 Հիպնոսարութեան կեդրոն
 դեկավարութեամբ՝
 Փորձառու բժիշկ Արթին Սադրեանի
 Փասատինայի մէջ
 Ամէն օր՝
 առաւօտեան ժամը 10:00էն մինչեւ
 կ.ե. ժամը 3:00

Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E
 Pasadena CA 91104
 Հեռախօս (818) 434-8118 միայն ժամադրութեամբ

«Միտք մարմնի վրայ» բուլացման (relaxation) միջոցաւ
 կը դարմանուին.

- Մարմնային բռնիկ հիւանդութիւններ, արեան
 գերննշում, շաքարախտ, ազնա, եւ այլն:
- Մոլութիւններ - սիկարէթ, ալքոլ, քմրադեղեր, եւ այլն:
- Հոգեկան տագնապներ - անձկութիւն,
 ընկճուածութիւն, վախ, անհունութիւն, եւ այլն:
- Մանուկներու յատուկ վիճակներ - ADD, գիշերային
 մէգ, եղունգի կրծում, եւ այլն:
- Ուսումնական եւ սրբաբային բարելաւում

Չեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net www.massisweekly.com

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ
Palm Springs

PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՅՈՂ
ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին,
 վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ
 նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ
 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ
 լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ
 փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժա-
 մեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել
(818) 246-0125

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450



ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱԲԱԲԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՏԱՐԲԵՐ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ

20 օրից էլ քիչ ժամանակ է մնացել Հայաստան-էստոնիա ֆուտբոլի աշխարհի առաջնութեան ընտրական մրցավեճին: Առաջիկայ 2 շաբաթների ընթացքում հաւաքականի անդամները պէտք է փորձեն լաւ մարզավիճակ ձեռք բերել Մարտի 28-ին կայանալիք հանդիպումից առաջ:



Առայժմ հաւաքականի ոչ բոլոր թեկնածուներ ունեն խաղային պրակտիկա: Արտասահմանում հանդէս եկող ֆուտբոլիստները նոր են սկսում մրցաշրջանը, իսկ Հայաստանում մրցաշրջանը կը մեկնարկի միայն Մարտի 17-ին: Դարպասապահներից խաղային պրակտիկա ունի Գէորգ Կասպարովը, որն իրանում մասնակցում է «Տերակտոր Սագի» թիմի ելույթներին: Հիմնական դարպասապահ Ռոման Բերեզովսկին «Խիմկի»-ի կազմում մասնակցել է մի շարք ստուգողական հանդիպումների, իսկ պաշտօնական հանդիպման Ռոման պէտք է մասնակցի Մարտի 14-ին մեկնարկելիք Ռուսաստանի պրեմիեր լիգայի 2009 թ. խաղարկութիւնում: 1-ին տուրում «Խիմկի»-ն հիւրընկալուելու է Մոսկուայի «Լոկոմոտիվ»-ին:

Պաշտպաններից խաղային պրակտիկա առայժմ չունի Ռոբերտ Արզումանեանը: Դանիական «Ռանդերս»-ում Արզումանեանը, ինչպէս եւ 2008 թ. 2-րդ կէսին, հիմնականում յայտնուում է պահեստայինների նստարանին: Թէեւ «Ռանդերս»-ը պաշտպանութիւնում բաւական անյաջող է հանդէս գալիս, սակայն Արզումանեանին շարունակում են չվստահել: Արդէն 2 ամսից աւել է ակումբը չունի վահագն Մինասեանը, որը կտրականապէս հրաժարուում է շարունակել ելույթները «Արարատ»-ում: Մինասեանը սպասում է Յունիսին, երբ աւարտուի պայմանագրի ժամկէտը, որից յետոյ նա կը ստանայ ազատ խաղացողի կարգավիճակ:

Դոնեցկի «Մետալուրգ»-ում ելույթ ունեցող Արարատ Առաքելեանը օրերս մասնակցեց Ուքրաինայի առաջնութեան 19-րդ տուրի «Խարկով»-ի հետ մրցավեճին: Առաքելեանը հիմնական կազմում էր եւ մասնակցեց ողջ հանդիպմանը, որում «Մետալուրգ»-ը պարտուեց 0:1 հաշուով: Լաւ մարզավիճակ է ձեռք բերում մէկ այլ կիսապաշտպան Լեւոն Պաշալեանը, որը վերջերս շուեռական ԳԱԻՍ-ից տեղափոխուեց նորվեգական «Ֆրեդրիկստադ»-ը: Պաշալեանը արդէն հասցրել է դառնալ Նորվեգիայի փոխ-ախոյանի առանցքային խաղացողներից մէկը:

Վերջին 10 ամիսների ընթացքում դարձեալ անորոշ վիճակում է յարձակուող Էդգար Մանուչարեանը, որը ժամանակ առ ժամանակ մասնակցում է Ամստերդամի «Այաքս»-ի երիտասարդական թիմի հանդիպումներին: Մանուչարեանին ներկայիս վիճակը չի գոհացնում եւ երիտասարդ խաղացողը մտադիր է հեռանալ հոլանտական ակումբից: Ռոբերտ Զեբեյեանը սկսել է մասնակցել Սոչիի «Ժեմչուֆինա»-յի ստուգողական հանդիպումներին:

ՀԱՍՏԱՏՈՒԵԼ Է 2009 ԹՈՒԲԱԿԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱԲԱԹԻ ԽԱՂԱՐԿՈՒԹԵԱՆ ԽԱՂԱՅԱՆԿԸ

Հաստատուել է 2009 թուականի ֆուտբոլի Հայաստանի գաւաթի խաղարկութեան խաղացանկը: Հայաստանի այս տարուայ գաւաթի խաղարկութեան 1/4 եզրափակչի առաջին եւ պատասխան հանդիպումները տեղի կ'ունենան Մարտի 17-18-ին եւ Ապրիլի 7-8-ին:

Մարտի 17-ին տեղի ունենալիք «Փիւնիկ»-«Կիլիկիա» հանդիպումը կը կայանայ Երեւանի «Նաիրի» մարզադաշտում՝ ժամը՝ 15:00-ին, նոյն օրը կայանալիք «Ուլիս»-«Գանձասար» մրցավեճը՝ Երեւանի «Միկա» մարզադաշտում:

Մարտի 18-ին «Բանանց»-«Արարատ» մրցավեճը նախատեսուած է Երեւանի «Նաիրի», իսկ «Միկա»-«Շիրակ» հանդիպումը՝ «Միկա» մարզադաշտերում: Այս գոյգերի պատասխան հանդիպումները կը կայանան Ապրիլի 7-ին եւ 8-ին, մասնաւորապէս, առաջին օրը կը մրցեն «Կիլիկիա»-«Փիւնիկ» եւ «Գանձասար»-«Ուլիս» թիմերը, համապատասխանաբար, Երեւանի «Հրազդան» եւ Կապանի «Գանձասար» մարզադաշտերում, իսկ խաղային երկրորդ օրը կը կայանան «Արարատ»-«Բանանց» եւ «Շիրակ»-«Միկա» գոյգերի պատասխան հանդիպումները՝ Աբովեանի եւ Գիւմրիի քաղաքային մարզադաշտերում:

ՎԱԽԹԱՆԳ (ՎԻԳ) ԴԱՐՉԻՆԵԱՆԸ ՓԵՏՐՈՒԲԱՐ ԱՍՍՈՒԱՅ 10 ԼԱԲԱԳՈՅՆ ԲՈՆՑՔԱՍԱՐՏԻԿՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ

Թեթեւագոյն քաշային կարգում աշխարհի բացարձակ ախոյեան Վախթանգ Դարչինեանն ամերիկեան The Ring ամսագրի կողմից ընդգրկուել է անկախ քաշային կարգից փետրուար ամսուայ 10 լաւագոյն բռնցքամարտիկների շարքը: Հայ բռնցքամարտիկը եզրափակում է լաւագոյն տասնեակը: Հայ բռնցքամարտիկն իր մրցելույթներով, տօնած տպաւորիչ յաղթանակներով բազմիցս ապացուցել է, որ ոչ միայն իր քաշային կարգում է ուժեղագոյնը՝ նուաճելով աշխարհի բացարձակ ախոյեանի տիտղոսը, այլեւ աշխարհի լաւագոյն բռնցքամարտիկներից մէկն է:

The Ring ամսագրի կազմած 10 լաւագոյն բռնցքամարտիկների ցուցակը գլխաւորում է ֆիլիպինցի Մենի Պակիտան: 2-րդ տեղում թեթեւ քաշում WBA-ի եւ WBO-ի վարկածներով աշխարհի ախոյեան, մեքսիքացի Խուան Մանուէլ Մարկեսն է: Լաւագոյն եռեակը եզրափակում է միջին քաշում աշխարհի նախկին բացարձակ ախոյեան, ամերիկացի Բեռնարդ Հոպկինսը: Նրան յաջորդում է թեթեւ քաշում WBC-ի վարկածով աշխարհի ախոյեան, մեքսիքացի Իսրայէլ Վասկեսը: Տասը լաւագոյնների թւում են նաեւ կիսամիջին քաշային կարգում WBA-ի վարկածով աշխարհի նորընծայ ախոյեան, ամերիկացի Շէյն Մոզլին:

ԼԵՌՆԱԴԱՐՈՒԿԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱԲԱԲԱԿԱՆԻ ՊՐՈՆՁԷ ՄԵՏԱԼ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ

Լեռնադահուկային սպորտի Հայաստանի հաւաքականը պրոնզէ մետալի է արժանացել Լիբանանի Քեդարս քաղաքում կայացած միջազգային վարկանիշային մրցաշարում: Յատուկ ուրաւակցելով 3-րդ հորիզոնականում է յայտնուել Հայաստանի ներկայացուցիչ Արսէն Ներսիսեանը: Այս մասին «Ա1+»-ին տեղեկացրեց Հայաստանի դահուկային սպորտի ֆեդերացիայի գլխաւոր քարտուղար Գագիկ Սարգսեանը:



«Մեր դահուկորդները յատկապէս յաջող են հանդէս եկել յատուկ ուրաւակցելով, որտեղ Արսէն Ներսիսեանը 67.75 միւլրոյով գրաւել է 3-րդ հորիզոնականը, իսկ Աբրահամ Սարկախեանը 77.17 միւլրոյով զբաղեցրել է 4-րդ տեղը: Աւելի երիտասարդ Եուրի Մանուկեանը գրաւել է 8-րդ տեղը, սակայն մինչեւ 20 տարեկանների շարքում նրա արդիւնքը եղել է լաւագոյնը», -ասաց Գագիկ Սարգսեանը:

Հայաստանի հաւաքականում ընդգրկուած 3 դահուկորդները հանդէս են եկել նաեւ հսկայ ուրաւակցելով, սակայն ըստ Գագիկ Սարգսեանի մրցանակային տեղ չեն գրաւել. «Մեր մարզիկներից լաւագոյն արդիւնքը ցոյց է տուել Աբրահամ Սարկախեանը, որը 54.96 միւլրոյով գրաւել է 6-րդ տեղը: Աբրահամը զգալիորէն բարելաւել է ցուցանիշը: Արսէն Ներսիսեանը յաջորդել է Սարկախեանին՝ գրաւելով 7-րդ տեղը, իսկ Եուրի Մանուկեանը 17-րդն է եղել»:

Մրցաշարին մասնակցել են Իտալիայի, Շվեյցարիայի, Արժենթինայի, Կիպրոսի, Թուրքիայի, Լիբանանի, Մեքսիքոյի, Փակիստանի, Մարոքքոյի, Ալժիրի եւ Հայաստանի ներկայացուցիչները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻՍՏՈՒՅԻՆԵՐԸ ՅԱՋՈՂ ԵՆ ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՐՈՊԱՅԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆՈՒՄ

Ռուսաստանի Սանկտ Պետերբուրգ քաղաքում ընթացող կանանց Եւրոպայի շախմատի անհատական առաջնութեան առաջին պարտիաներում հայաստանցի գրոսմայստերներ Լիլիթ Մկրտչեանը, Նելլի Աղինեանը եւ Լիլիթ Գալոյեանը յաղթանակներ են տարել, համապատասխանաբար, ռուսաստանցի Սաղուխազ Շալոուլինայի, ռուս Անտոնինա Զիկինայի եւ ռուս Լիդիա Մալինիչեւայի նկատմամբ: Լ. Մկրտչեանը եւ Ն. Աղինեանը խաղացել են սեւ ֆիգուրներով: Միջազգային վարպետ Սիրանուշ Անդրէասեանը սպիտակներով միւլրոյով կիսել է Աննա Մուզիչիկի հետ՝ Սլովենիայից, իսկ Աննա Հայրապետեանը սեւ ֆիգուրներով ոչ-ոքի է խաղացել ռուսիուհի Կորին-Իգբել Պեպտանի հետ:

2-րդ տուրում վիճակահանութեամբ երկու Լիլիթները՝ Մկրտչեանն ու Գալոյեանը մրցեցին միմեանց հետ: ՀՀ հաւաքականի անդամների մրցավեճը խաղաղ էլք ունեցաւ: Երկուսն էլ վաստակել են 1,5-ական միւլրոյ եւ առաջատարներին հետապնդող մի մեծ խմբի մեջ են:

Առայժմ հայ շախմատիստուհիներից առաւել յաջող է հանդէս գալիս Նելլի Աղինեանը, որը 2-րդ յաղթանակը տոնեց՝ առաւելութեան հասնելով չեխ Կատերինա Կեդրիկովայի նկատմամբ: Իսկ ահա մեր միւլրոյ երկու շախմատիստուհիներն անյաջողութեան մատնուեցին՝ կրելով անդրանիկ պարտութիւնները: Աննա Հայրապետեանը սպիտակներով զիջեց Տատիանա Շաղրինային, իսկ Սիրանուշ Անդրէասեանը սեւերով պարտուեց ռուսաստանցի Անաստասիա Մարտինովային:

Երկու տուրից յետոյ 22 շախմատիստուհիներ, որոնց թւում է նաեւ Նելլի Աղինեանը, վաստակել են 2-ական միւլրոյ: 3-րդ տուրում Աղինեանը սեւերով մրցելու է ռուսաստանցի Եկատերինա Կովալենսկայայի հետ: Լիլիթ Գալոյեանի մրցակիցը կը լինի ուքրաինացի Մարիա Մուզիչուկը: Լիլիթ Մկրտչեանը սեւերով կը խաղայ մակեդոնացի Իրինա Բուլմազայի հետ:

Չեռնոգորիայի Բուդուա քաղաքում ընթացող տղամարդկանց շախմատի Եւրոպայի առաջնութեան 3-րդ փուլում հայաստանցի գրոսմայստեր Վլադիմիր Յակոբեանը, սեւ ֆիգուրներով պարտութիւն կրելով յոյն Խրիստոս Բանակիսից, վաստակել է 2 միւլրոյ եւ զբաղեցնում է 45-րդ տեղը: Գրոսմայստեր Զաւէն Անդրէասեանը ոչ-ոքի է խաղացել սեւերով ռուս Նիկիտա Վիտյուկովի հետ եւ 2 միւլրոյով 71-րդ տեղում է: Նշուած փուլում գրոսմայստերներ Տիգրան Պետրոսեանը, Տիգրան Քոթանջեանը եւ Արտաշէս Մինասեանը սեւ ֆիգուրներով յաղթանակ են տարել, համապատասխանաբար, գերմանացի Օլիվեր Կուրանի, թուրք Մուսթաֆա Երլմազի եւ ռուսաստանցի Կիպրիան Բերբատովի նկատմամբ:

Առաջնութեան 4-րդ տուրից յետոյ հայ շախմատիստներից լաւագոյն արդիւնքն ունեն երկու Տիգրանները՝ Պետրոսեանն ու Քոթանջեանը, որոնք վաստակել են 3-ական միւլրոյ: Երկուսն էլ մրցաշարում 2-րդ անընդմէջ յաղթանակները տօնեցին, ընդ որում Քոթանջեանի համար այդ յաջողութիւնն արդէն 3-րդն էր: Նա պարտութեան մատնեց Չեխիան ներկայացնող Վլադիմիր Տալային: 5-րդ տուրում Քոթանջեանը կը մրցի ֆինն թոմի Նիւբակի հետ: Տիգրան Պետրոսեանը յաղթեց խորուաթ շախմատիստ Միտ Յեբալոյին: Յաջորդ տուրում նրա մրցակիցը կը լինի ուկրաինացի Իլիա Նիժնիկը:

2,5-ական միւլրոյ ունեն Վլադիմիր Յակոբեանը, Զաւէն Անդրէասեանն ու Արտաշէս Մինասեանը: Երեքն էլ իրենց պարտիաներն աւարտեցին ոչ-ոքի՝ հաշտութիւն կնքելով համապատասխանաբար էլիթայ Սաֆարլիի, Սլավիան Մարինովիչի եւ Դիթեր Նիսիպիանուի հետ: Մրցաշարում 2-րդ յաղթանակը տօնեց Արթուր Չիբուլսեանը՝ առաւելութեան հասնելով ռուսաստանցի Վլադիմիր Պոտիկինի նկատմամբ: Արթուրը վաստակեց 2 միւլրոյ: Նոյնքան միւլրոյ ունեցող Արման Փաշիկեանն անդրանիկ պարտութիւն կրեց՝ զիջելով ուկրաինացի Իլիա Նիժնիկին: